

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԿԵՆԴՐԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Կ. ԴԱԼ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՄԱՆՐ ՄՈՒՇՏԱԿԱՎՈՐ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԸ
ԵՎ ՆՐԱՆՑ ՈՐՍԸ**

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1947

639.11(47.925) 10174

13 7m U. 2.

2p 5m 2p 5m 2p 5m

2p 5m 2p 5m 2p 5m

4m.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԿԵՆԻԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ


636.93(47.925)

7-13

Ս. Կ. ԴԱԸ

ԱՏՈՒԿԱՍԻ Է 1981

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՄԱՆՐ ՍՈՒՇԱԿԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ
ԵՎ ՆՐԱՆՑ ՈՐՍԸ



~~10177~~
A 19378

ԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1947

Պատ. խմբագիր՝ պրոֆ. Ա. ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ

С. К. ДАЛЬ

Мелкие пушные звери Арм. ССР
и охота на них

(На армянском языке)

Изд. АН Арм. ССР. Ереван, 1947 г.

Հայաստանում ապրում են մի ամբողջ շարք վայրի կենդանիներ, որոնց օգտագործում են որպես որսի արժեքավոր առարկաներ: Զրաժուլբը, փոքրողը, աղվեսը, գայլը, շնագայլը, վայրի կոտուխները, լուսանները, արջերը և այլ կենդանիներ մեր սեփականությանը պատկանում են: Բացի հիշյալ կենդանիներից Հայաստանի զանազան որսառնակներում համեղ միս ունեցող կենդանիներ են բնակվում, որոնք որպես որսակենդանի փոքր արժեք չեն ներկայացնում: Նապաստակները, վարազները, այծյամները, վայրի ոչխարները և այծերը միշտ էլ զբաղվել են հղի որսորդների համար:

Թվարկած կենդանիների տեսակներից շատերը մեզ մոտ մեծ քանակությամբ են հանդիպում և դրանց ձեռք բերումը միայն որսի ժամկետներով է կանոնավորվում: Մյուսները՝ գաղաղ բազմաձևային և մարդու կողմից չափից դուրս հետապնդվելու պատճառով շատ պակասել են: Այդ պատճառով էլ հարկը սահմանից այծյամներին, վայրի ոչխարներին ու այծերին պաշտպանության տակ առնել, նրանց համար հատուկ արգելափայրեր կազմակերպել, որտեղ այդ կենդանիների որսը միանգամայն արգելված է: Հետազոտում, երբ այդ սահմանափակ կենդանիները շատանան, որսորդներին թույլ կտան դրանց ևս որսալ գահավաճառական ժամկետներում:

Օգտագործելով մեր երկրի բնական հարստությունը համադրանքով վայրի կենդանիներին՝ մեր ձգտումն է անել այդ ամենալավ կերպով: Որսորդությունը պետք է բնութագրվի տնտեսորեն վերցնել այն առավելագույնը, ինչ կարելի է վերցնել, բայց այն հաշվով, որ վայրի կենդանիների պլանային կազմակերպումը, այլ տարեցտարի ավելանա: Որսորդությունն այնպես

պիտի անիլ, որ օգտագործվին մուշտակի և մսի պաշարների միայն գտնվածները՝ թողնելով հիմնական դրամագլուխն անհրաժեշտության մեջ, և դրանով ապահովելով որսի պրոդրեսիվ աճը հետագա տարիներում: Իհարկե այս զրույթը չի վերաբերում գլուխատնտեսությանը և որսորդական տնտեսությանը ֆնաս հասցնող գիշատիչներին: Դայլի, լուսանի, վայրի կառվի, ընձառյուծի և մի քանի այդպիսի հանրահայտ ֆնասատուների ոչնչացումը միայն կրարձրացնի որսահանգակների արտագրողականությունը և ընտանի կենդանիների գլխաքանակը:

Մեր որսահանգակներից առավելագույն եկամուտ ստանալու խնդիրը դնելով՝ ակամա հարց է ծագում՝ արդյոք բոլոր շահագործման համար հնարավոր կենդանիներն ընդգրկված են տնտեսական օգտագործման մեջ, թե ոչ: Պատասխանենք այդ հարցին. այո, բոլոր արժեքավոր կենդանիներն ընդգրկված են. բայց չէ՞ որ դրանք այնքան էլ շատ չեն: Եթե մոտավոր հաշիվ անենք, թե Հայկական ՍՍՌ ամբողջ տարածությունը մեզ որքան մուշտակավոր և մսատու որսակենդանիներ է տալիս, ապա շատ փոքր թվեր կստացվեն: Մեզ մոտ միջին հաշիվ մի քառակուսի կիլոմետրից տարեկան որսում են 0,17 տոննա, 0,03 կգ-ը, 0,001 ջրսամույր, 0,15 նապաստակ և այլն: Մինչդեռ այստեղ հանդիպում են նաև մի քանի կենդանիներ, որոնք թեև իրենց որակով պակաս արժեքավոր են, բայց զգալի մեծ քանակ են կաղմում: Որպես օրինակ, հիշատակենք խլուրդների խտությունը, որ որոշ տեղերում հասնում է մինչև 42,6 հատի մի հեկտարին, կամ շիկառնետների խտությունը, որն առանձին հողամասերում տատանվում է եղակի օրինակներից մինչև մի քանի հարյուր հատի մի հեկտարին:

Մենք չենք կասկածում, որ խլուրդներին, գետնաօկյուռներին, համսերներին, ավազամկներին, ջրային և ամբարային առնետներին, շիկառնետներին և անդրկողմային սկյուռներին որպես մուշտակավոր կենդանիներ օգտագործելը զգալի չափով կրարձրացնի որսահանգակների արտագրողականությունը: Միաժամանակ մանր մուշտակավոր կենդանիները որսի ուժեղացումը կադատի ֆնասատուներից մեր ցանքերի, մարգագետինների ու այդիների շատ հեկտարներ, ինչպես և մթերման ավելի բարձր

Քիւիք կտա Հայաստանում մինչև այժմ լրիվ կերպով չօգտագործ-
վող «փափուկ» սակունք:

Սույն գրքույկում շարադրված է Հայաստանի մանր մուշ-
տակավոր կենդանիների նկարագրութլունը, տարածումը և բիո-
լոգիան, ինչպես նաև նրանց որսալու և մորթիներն օգտագոր-
ծելու կանախները: Գրքույկն կազմված է երիտասարդութլան
համար՝ սովորողների, կոլխոզնիկների, որսորդների: Համապատաս-
խան տնտեսական և մթերող կազմակերպութլունների անհետա-
ձգելի խնդիրն է՝ նրանցից բրիգադներ կազմակերպել, մանր
մուշտակավորների մորթիները հանձնելու վերաբերլալ կոլեկտիվ
ու անհատական համաձայնագրեր կազմել, ինչպես նաև նրանց
որսի գործիքներով ապահովել:

1871

1872

1873

1874

1875

1876

1877

1878

1879

1880

1881

1882

1883

1884

1885

1886

1887

1888

1889

1890

1891

1892

1893

1894

1895

1896

1897

1898

1899

1900

1901

1902

1903

1904

1905

1906

1907

1908

1909

1910

1911

1912

1913

1914

1915

1916

1917

1918

1919

1920

1921

1922

1923

1924

1925

1926

1927

1928

1929

1930

1931

1932

1933

1934

1935

1936

1937

1938

1939

1940

1941

1942

1943

1944

1945

1946

1947

1948

1949

1950

1951

1952

1953

1954

1955

1956

1957

1958

1959

1960

1961

1962

1963

1964

1965

1966

1967

1968

1969

1970

1971

1972

1973

1974

1975

1976

1977

1978

1979

1980

1981

1982

1983

1984

1985

1986

1987

1988

1989

1990

1991

1992

1993

1994

1995

1996

1997

1998

1999

2000

2001

2002

2003

2004

2005

2006

2007

2008

2009

2010

2011

2012

2013

2014

2015

2016

2017

2018

2019

2020

2021

2022

2023

2024

2025

2026

2027

2028

2029

2030

2031

2032

2033

2034

2035

2036

2037

2038

2039

2040

2041

2042

2043

2044

2045

2046

2047

2048


2049

2050

1. ԱՆԴՐԿՈՎԿԱՍՏԱՆ ԽԼՈՒՐԴ

Talpa europaea transcaucasica Dahl.

Խլուրդը ստորերկրյա կյանք վարող կենդանի է: Նա կույր է, աչքերը շատ փոքր են՝ ծածկված կաշվի տակ: Քիթը երկար է և կաղմում է շարժուն կնճիթ: Առջևի թաթերը լայն են՝ հարմարված հողը փորելուն և համեմատաբար մեծ ճանկեր են կրում: Հետևի ոտքերը առջևինից շատ ավելի փոքր են: Ամենից ուշա-



Նկ. 1. Խլուրդ

գրավը խլուրդի մորթն է: Այս կենդանու ամբողջ մարմինը ծածկված է կարճ, թավշանման մուշտակով, որի մազիկները հարթվում են ցանկացած ուղղությամբ: Նրա գույնը դորձավուն սև է, ձեր կենդանիների փորի միջին մասում և կզակի վրա, շեկշաղանակագույն երանգավորում կա:

Անդրկովկասյան խլուրդի մարմնի երկարությունը քթի ծայրից մինչև պոչի հիմքը 10—12 սմ է, առջևի ոտքի մակարդակին է միջին հաշվով 1,4×1,6 սմ, հետևի թաթի երկարություն է 1,4—1,7 սմ, իսկ պոչին՝ 2—3,3 սմ: Խլուրդի մարմնի ձևը,

ոտքերն ու թափշաման մուշտակը շատ լավ հարմարված են
 փորելուն և հողի մեջ ապրելուն: Խլուրդները հողի զանազան
 խորութեան մեջ անցքերի մի ամբողջ բաժիղ են փորում, որոնց
 մեջ նրանք իրենց համար սնունդ են փնտռում, հանգստանում
 են, բազմանում են: Խլուրդի բունը գտնելը հեշտ է շնորհիվ հողի
 փոքր կույտերի, որ այդ կենդանիները դուրս են ածում փորե-
 լու հետևանքով: Այն տեղերում, որտեղ խլուրդները շատ են,
 դրանց բները անցքերի ցանցով հյուսվում են իրար հետ՝ ծառերի
 ու թփերի արմատների մոտ, ժայռերի մոտ և բաց դաշտում:
 Խլուրդների բնացանցի խորքում մեկ կամ մի քանի խույ կա,
 որից դեպի զանազան կողմեր անցքեր են գնում. այդ անցքե-
 րում խլուրդները սնունդ են փնտռում: Տարվա տաք եղանակին
 այդ կենդանիները շարունակ երկարացնում են հիշյալ անցքերը,
 նրանք ձգտում են ընդարձակել իրենց սրնավայրերը: Փորելու
 հետևանքով անցքերի մեջ կուտակված հողը խլուրդները հատուկ
 անցքերով հողի երես են դուրս բերում: Փափուկ հողի շերտում
 կամ անտառի բուսահողում խլուրդները շատ հաճախ իրենց ստոր-
 երկրյա անցքերը փորում են ժակերեսին մոտ՝ պարզապես հողն
 իրարից հեռացնելու միջոցով: Այս եղանակով անցքեր անելու
 գեպքում գետնի երեսին հողի կույտեր չեն ստացվում, բայց դրա
 փոխարեն շատ լավ նկատելի են լինում հողի ցածր թմբիկները,
 որոնց կարելի է պարզապես մատով ծակել և մի անգամից խլուր-
 դի կերային անցքին հասնել: Խլուրդները նորոգում են որևէ
 մեկի կողմից խախտված (փորված, փլանաված) բնի անցքերը,
 հող են լցնում կամ փլանաված տեղի մոտ հատուկ շրջանցքեր են
 փորում: Խլուրդներն իրենց ստորերկրյա գործունեության ժա-
 մանակ շատ զգալուն են. նրանք ոչ միայն իրենց անցքերում
 հաջողութեամբ կեր են փնտռում, այլև շատ զգուշ են. ամենա-
 փոքր ազդուկի դեպքում միանգամից ընդհատում են փորելը և
 իրենց քնակաբանի խորքերն են փախչում: Տարվա ամբողջ ցուրտ
 ժամանակը խլուրդները անց են կացնում իրենց բների ավելի
 խոր տեղերում: Չմահն աշատեղ՝ չսառչող հողում են փնտռում
 նրանք իրենց կերը՝ գլխավորապես անձրևաորդեր, զանազան
 թրթուրներ ու միջատներ: Խլուրդները միջատակեր կենդանիներ
 են և աչքի են ընկնում զարմանալի շատակերությունով: Խլուրդը
 մի օրվա ընթացքում իր կշռից մի քանի անգամ ավելի է խրժ-

ուում: Խլուրդի զգայարաններից ամենից լավ դարգացած են հոտառությունն ու լսողությունը:

Խլուրդները տարին մի անգամ են բազմանում: Նրանք գուգավորվում են գարնանը, հղիությունը տևում է մոտավորապես մեկ ամիս: Էգ խլուրդն ամեն անգամ 3-ից մինչև 12 ձագ է բերում: Ծնվելուց 5—6 շաբաթ հետո երիտասարդ խլուրդներն արդեն մոր կիսի չափ են և ընդունակ՝ ինքնուրույն կյանք վարելու:

Խլուրդի սեզանային մազափոխությունը սկսվում է մեջքի միջին մասից և տարածվում է գեպի պոչը, գլուխը և կողքերը: Ամենից վերջը փոխվում են աչքերի մոտի և փորի որոշ մասերի մազերը: Մեր չափահաս խլուրդների առաջին մազափոխությունը տեղի է ունենում հունիսի 20—25-ին (արուների մազն ավելի շուտ է թափվում, քան էգերինը): Երկրորդ՝ ամառային մազափոխությունը տևում է հունիսից մինչև օգոստոսի առաջին կեսը: Չափահաս խլուրդների ամառային մազափոխության սկզբից մի քանի օր անց՝ սկսում է թափվել նաև երիտասարդ կենդանիների մազը:

Խլուրդների աշնանային մազափոխությունը ՍՍՌՄ Եվրոպական մասում սկսվում է սեպտեմբերի կեսից և տևում է երկուս ու կես ամիս (Հայաստանում յուրով անդրկովկասյան խլուրդների աշնանային մազափոխության մասին անմիջական տվյալներ չունենք, բայց ի նկատի ունենալով գարնան ուշ մազափոխությունը, պետք է որ մեր կենդանիներն աշնանն ավելի վաղ մազափոխում կատարեն, քան ՍՍՌՄ Եվրոպական մասում):

Մազափոխության առկայությունն հեշտությամբ հաստատվում է մաշկի խոր շերտերի մուգ գույնով, որը լավ նկատվում է մորթու տակի կողմից: Մորթափառի այդ մուգ գույնը բացատրվում է նրանով, որ աճող մազերի սոխուկների արտաքին մասերում հատուկ պիգմենտ՝ գունանյութ է առաջանում:

Հայաստանում խլուրդ գտնվելու մասին առաջին անգամ ամսուրում հրապարակվել է 1934 թվին և մինչև այժմ էլ այդ կենդանիների տարածումը մեզ մոտ ճշգրիտ կերպով պարզված չէ: Եղած տվյալներով՝ խլուրդները մեզ մոտ առավելապես անառային շրջաններում են հանդիպում: Այս կենդանիները մեծ քանակությամբ հայտարերված են Կալինինոյի, Ստեփանավանի,


Կիրովականի, Դիլիջանի, Շառչաղանի, Ալմուլերդու և Ախտայի շրջաններում: Փոքր քանակությամբ խլուրդներ ապրում են Սևանի և Ախտայի շրջանների անտառազուրկ տարածություններում (Փամբակի լեռնաշղթայի արևելյան և հարավային լանջերի որոշ տեղամասերում, Միսխանա գետի հովտում, Զանգուզու գետի մոտի մարգագետիններում նշված են խլուրդների մեկուսի գաղութներ մինչև Կարաջորան գյուղը): Չստուգված տըլ-յալներով խլուրդներ հանդիպում են Սյունիքի անտառներում (Միսխանի շրջան): Ներկայումս ուղղաձիգ, գծով խլուրդի բներ զբանցված են ծովի մակերևույթից 1450-ից մինչև 2730 մետր բարձրության վրա:

Խլուրդի որսը դժվարություն չի ներկայացնում: Նրանց կարելի է որսալ մի քանի տիպի խլուրդաթափարդներով, որոնք զբվում են այդ կենդանիների բներում: Ամենատարածված տիպի խլուրդաթափարդը պատկերացված է № 2 А նկարում (այն պատրաստված է 4 մմ հաստության պողպատալարից, իսկ նրա հսկիչը՝ 2 մմ հաստության լարից):

Ավելի բարդ կազմություն ունի Փրանսիական խլուրդաթափարդը (նկ. 2Б), որը մի շարք զբաղան կողմեր ունի: Բերված նկարից լավ երևում է թե ինչպես է պատրաստված և ինչպես է գործում այն: Փրանսիական խլուրդաթափարդի համար որպես նյութ են ծառայում մի բարակ տախտակ (a), երկու զսպանակ (б), որոնք ծառայում են մետաղալարի շրջանակները (в) դեպի վեր քացիու համար, և տախտակի միջով համապատասխան տրամագծի անցքով տարած մետաղալար (г), որը խեղդում է խլուրդին: Այս թափարդի հսկիչը (д) պատրաստված է նույն մետաղալարից, ինչ որ «в» և «г» մասերը:

Խլուրդների որսով զբաղվել ցանկացող ամեն ոք հեշտությամբ կարող է պատրաստել հիշատակված երկու տիպի խլուրդաթափարդները: Ավելի դժվար է ամերիկական խլուրդաթափարդի (նկ. 2Б) արտադրությունը, որովհետև այն պատրաստելու համար հարկավոր է ունենալ թիթեղյա զսպանակ, շտամպ, որը հեշտացնում է հսկիչի դուրս ընկնելը երկաթից, և խլուրդին սեղմող ձողիկ:

Խլուրդաթափարդները բներում հետևյալ կերպ են սարքում: Գետնի երեսը դուրս ձգած հողակույտերի միջև սրածայր ձողով փնտռում են խլուրդի անցքը, ապա վերջինիս վրա որևէ կարող




Նկ. 2. Ունիտարն տեսակի խլուրդաթակալիկներ

առարկայով ճիմի (հող՝ բույսերի միահյուսված արմատներով) կամ պարզապես հողաշերտի պահանջված չափի քառակուսի մի կտոր են կտրում: Վերցնելով ճիմի կտորը կամ հողը՝ բացում են խլուրդաքնի անցքը և նրա մեջ դնում մի դույզ նկ. 2A-ով պատկերած խլուրդաթակարդ և կամ մեկ հատ ֆրանսիական թակարդ (նկ. 2 B): Իհարկե, առաջին դեպքում խլուրդաթակարդներն իրենց հսկիչներով հակառակ ուղղություներում են դրվում, այնպես որ նրանց զսպանակները դեպի իրար լինեն դարձած: Խլուրդաթակարդները բնի մեջ պետք է դնել արդեն լարված և այն հաշվով, որ թակարդի օղակը որքան հնարավոր է սերտ շփվի բնի անցքի պատերին: Լարվածքը պետք է զգալուն լինի: Խլուրդաթակարդը սարքելուց հետո կարելի է ամրացնել բնում փոքր ձողիկներով, սակայն դա անհրաժեշտ չէ, որովհետև թակարդն ընկած խլուրդները համարյա միշտ էլ շատ շուտով անշնչանում են: Այնուհետև թակարդը սարքելու համար քացած անցքը վերևից ծածկում են կտրած ճիմի կամ հողի շերտով: Խլուրդաթակարդի տեղը պետք է որևէ ձևով նշան անել (ամենից լավ է մոտը կտոր կապած ձողիկ տնկել կամ լավ նկատելի մի քարակույտ անել): Հարմար է, որ խլուրդաթակարդները դասավորվեն որոշ ուղղությամբ, այդ դեպքում դրանց ստուգելը հեշտանում է, օրինակ թակարդները կարելի է դասավորել կածանների, ճանապարհների երկարությամբ (խլուրդներն առանձնապես լավ են որսվում, եթե բնի անցքը ճանապարհի տակն է գտնվում), հեղեղատների եզրով, միջնակների շերտերի մոտ և այլն:

Խլուրդաթակարդները պետք է ստուգել օրական 2 կամ 3 անգամից ոչ պակաս, մանավանդ ամառը, որովհետև միշտ էլ փտանդ կա, թե մորթը կարող է հոտել, կամ որևէ այլ պատճառից **քրտավել**:

Թակարդն ընկած խլուրդին պետք է զգուշությամբ ազատել և թակարդը նորից նույն տեղը դնել, քանի որ շատ հաճախ նույն անցքն օդատգործում են մի քանի խլուրդներ և դրա շնորհիվ նույն տեղում կարելի է բռնել 5—6 խլուրդ և երբեմն նույնիսկ ավելի: Խլուրդաթակարդը նոր բուն պետք է տեղափոխել միայն այն ժամանակ, երբ համոզվում ենք, որ այլևս տվյալ անցքով խլուրդ բուրդովին չի անցնում և մոտերքում այդ կենդանիների գործունեությունը հետքեր չեն նկատվում:

Խլուրդի մորթը հանում են հետևյալ կերպ. սկզբում կտրում են ոտքերի մերկ մասերը և պոչը՝ ինչպես այդ ցույց է տրված նկ. 3Ա-ի վրա: Ապա ստորին շուրթից մինչև պոչի հիմքը մի ուղիղ կտրվածք են անում: Այդ կտրվածքն ավելի հեշտ է անել նեղ



Նկ. 3. Խլուրդի մորթու հանման և ուղղման սխեման

առ ստոր դանակով, որն անց են կացնում խլուրդի մաշկի տակ մինչև վերջին կետը և ապա կտրում մաշկը (նկ. 3Ե): Այդ գործողությունը պետք է զգուշությամբ կատարել, որպեսզի որո-

վայնի բարակ մկանները չծակվեն կամ չկտրվեն, ալյուպես մորթը կարող է արյունառալիլ: Այնուհետև մորթը պետք է հանել—քերթել մատների օգնությամբ և միայն որոշ տեղերում գլխի վրա (շուրթերի և քթի մոտ) դիմել դանակի օգնությամբ: Խլուրդի մորթը հեշտ է հանվում: Հանելուց հետո անհրաժեշտ է լավ մաքրել մաշկի կտրոններից և ճարպից, այնպես որ մորթափառը միանգամայն մաքուր և հարթ ստացվի:


Խլուրդի հանած և մաքրած մորթիները պետք է ձգել փոել տախտակի վրա 5 կա՛մ 8 բարակ մեխերի կամ ամուր գնդառեղների օգնությամբ մորթափառը դեպի վեր: Ամենից ցանկալին է մորթն ուղղել-փոել այնպես, ինչպես ցույց է տրված նկ./Յ-ով B և Γ վրա: Մորթիները պետք է չորացնել չոր շինքում, ցույց ոչ արևի տակ: Նրանք շատ շուտ են չորանում և մեկ կոմ ամենաշատը երկու օրից հետո, երբ գլխի ու կտրվածքի եղբրի մորթը՝ ինչպես հարկն է, չորանում է, կարելի է տախտակից վերցնել և նախապատրաստել փաթեթները (բուռներ) կապելու համար: Խլուրդների մորթիները դարսում են դույզ-դույզ՝ մազը մազին, 50-ական հատ և խաչաձև կապում են լարով: Եթե ձգձգվում է նրանց հանձնումը մթերող կազմակերպություններին, ապա մորթիները փաթեթները պետք է պահել չոր շինքում՝ խնամքով պահպանելով խոնավությունից և վերջինիս հետևանքը հանդիսացող բորբոսից, դանազան միջատներից և մկանման կրծողներից, որոնք կարող են փնասել մորթիների մուշտակային ծածկույթը կամ մորթափառը:

2. Ա. Ք. Ի Ս

Mustela nivalis L.

Աքիսը կզաքիսների ընտանիքին պատկանող մեր ամենափոքր դիշատիչն է: Այս արագաշարժ կենդանիների մարմինը երկարավուն է, բարակ, համարյա ամբողջ երկարությամբ միանման: Աչքերը համեմատաբար խոշոր են, ափանջները՝ կլորավուն և կարճ մազերով ծածկված, ոտքերը և պոչը՝ կարճ: Աքիսները վազում են մեծ մասամբ ցատկուններով: Նրանք հիանալի մագլցում են քարերի և ծառերի վրա, ուղադրությամբ՝ զիստով ու հոտոտում են ճանապարհին պատահած ամեն բան և եռանդուն կերպով հետապնդում են իրենց օրսը:

Իրենց փորրության պատճառով աքիսները հեշտությամբ թափանցում են մկնանման կրծողների բները, ծառերի փշակները, ժայռերի ձեռքերը և հողի ձկղքերը: Աքիսները շատ են սիրում մազկցել քարերի կույտերի կամ հողի կոշտերի վրա: Բնակատեղ ընտրելու մեջ աքիսները պահանջկոտ չեն: Նրանք բնակ-



Նկ. 4. Աքիսը ձմեռային և ամառային մորթով

վում են գետերի հովիտներում և բարձր լեռներում, սառնանքում, ժայռերում, անտառում, շենքերի փլատակներում և քարահանքերում, փայտի զարտակներում, հարդի բարդոցներում և խոտի գեղերում, հանդիպում են նկուղներում, ցախանոցներում և բնակելի շինքերում:

Աքիսներն, ըստ երևույթին, իրենք չեն փորում իրենց բները, նրանց ճանկերը բարակ ու սուր են և հող փորելուն հարմարված չեն: Աքիսները սովորաբար ուրիշ կենդանիների (կրծողների) բներում են բնակութուն հաստատում կամ օգտագործում են իրենց բազմադան բնակատեղերի հարմար մեկուսի անկյունները:

Աքիսների գույնը փոխվում է տարվա եղանակի հետ: Ամառը, պատված թարմ մուշտակով, նրանց մաշմի ամբողջ վերին մասի, գլխի և պոչի գույնը մուգ է՝ սկսած թուխ շիկավունից մինչև թուխ-դարչնագույն, տակը՝ սպիտակ: Ամառային մուշտակի առանձին մաղերի երկարութունը մոտավորապես 10 մմ է: Չմուսնը Հայաստանում՝ տարածման մի քանի շրջաններում, աքիսը բոլորովին սպիտակում է, իսկ ավելի տաք տեղերում մի փոքր ավելի բաց գույն է ստանում, քան ամառն է: Նայած

քնակավայրերին տարվա ամբողջ ցուրտ ժամանակվա ընթաց-
քում աքիսների գունավորման աստիճանական անցումներ են
նկատվում թխավունից մինչև մաքուր սպիտակը, ըստ սրում
սպիտակ գույնը սկսում է տարածվել ամբողջ մարմնի և վզի
տակից գեղի կողքերը և այնուհետև դեպի գլխի, վզի և մեջրի
մեջտեղը: Մեր աքիսների ձմեռային մուշտակը նկատելի կեր-
պով ավելի մետաքսանման է և փաթթամ, քան ամառայինը:
Ձմեռային սուշտակի առանձին մազերի կրկարությունը մոտա-
փոքրապես 15 մմ է: Աքիսների ժաղամոխությունը կանխած է
շրջապատի ջերմային պայմաններից: Օբինակ, Փամբակի լեռ-
նաշղթայի վրա մազը լրիվ փոխած սպիտակ աքիսներ հանդի-
պում են սկսած նոյեմբերի վերջերից, իսկ դարձանը նույն տե-
ղում ձմեռային ժաղածածկույթի լրիվ փոխադրումը թխավուն
մազով նկատվել է ապրիլի առաջին կեսին:

Աքիսների սնունդը գլխավորապես մկնամյան կրծողներն
են: Նրանց ոչնչացնելով՝ աքիսները մեծ օգուտ են տալիս դյու-
ղատնտեսությանը: Բացի գանազան մկներից, դաշտամկներից,
ջրառնետներից և դաշտախորության, այգեգործության ու բան-
ջարբուծության այլ մնաստառներից՝ աքիսների սնունդը շատ
բազմազան է: Ինչպես ցույց է տվել տարվա դանազան եղանակ-
ներիս որսած աքիսների ստամոքսների հերձույթը, մեզ մոտ՝
Հայաստանում նրանք սնվում են ժապավիճիկներով, մանր
ձկներով և գորտերով: Կասկած չկա, որ որոշ թռչուններ, նրանց
ձագերը և բներում եղած ձվերը նույնպես այդ փոքր զիշատիչի
համար կեր են դառնում: Եվ ընդհանրապես, ըստ երևույթին
աքիսները հարձակվում են այն բոլորի վրա, ում կարող են հազ-
թահարել: Գրականության մեջ ցուցումներ կան այն մասին, որ
աքիսները կաքաջներ և նույնիսկ նապաստակներ են որսացի-
լայց, իհարկե, նրանք դբանով որսորդական տնտեսությանը
էական միտս չեն հասցրել: Մանր կրծողների առատության ժա-
մանակ աքիսները նրանց շատ ավելի մեծ քանակով են ոչնչաց-
նում, քան կարող են միանգամից ուտել: Այսպիսի դեպքերում
աքիսները հաճախ իրենց բներում կերի պաշարներ են հավա-
քում, որտեղ երբեմն հարյուրավոր մանր կրծողներ են դտել
դարաված:

Ինչպատի ունենալով, որ աքիսները չեն խորշում լեշից, մսի

թափուկների կույտերից և մախ պահեստներն էլ են հաճախում, կարելի է ենթադրել, որ այստեղ ևս այդ կենդանիներն իրենց համար կեր են գտնում:

Աքիսների բազմաթիվ պրոցեսը դեռևս շատ անբավարար է ուսումնասիրված: Ճշտորեն հայտնի չեն այս կենդանիների գուլգավորման ու հղիության ժամկետները: Կովկասի հայտնի հետազոտող Ն. Յա. Իիննիկի ենթադրությունները: Կովկասում աքիսների գուլգավորումը տեղի է ունենում մարտին, հղիությունը տևում է 35 օր, էգ աքիսն ավելի անգամ բերում է 5—7 ձագ: Աքիսը ձագերը ծնում է չոր տերևներով և խոտով ծածկված բնում, որը գտնվում է շատ խորը հողում կամ ժայռերի ծերպերում:


Աքիսի զգայարաններից լավ զարգացած են հոտառությունը, տեսողությունը և լսողությունը: Իրենց սովորություններով աքիսներն առավելապես գիշերային և աղջամուղջային գիշատիչներ են, նրանք այնքան էլ զգուշ չեն և շատ հետաքրքիր են: Մարզու հանդիպելիս այդ կենդանիներն աշխատում են շտապ կերպով մի որևէ ապաստարան գտնել, որի մեջ և թաքնվում են, բայց շատ շուտով սկսում են գլուխները դուրս հանել և ուշադրությամբ դիտել, թե ինչն իրենց անհանգստացրեց կամ վախեցրեց:

Մեզ մոտ՝ Հայկական ՍՍՌ-ում աքիսի երկու ձև է հանդիպում.

1. Կովկասյան մեծ աքիս (*Mustela nivalis dinniki* Sat.). Սրա չափերն են—մարմնի երկարությունը քթի ծայրից մինչև պոչի հիմքը՝ 16—26 սմ, ետևի թաթի երկարությունը (առանց ճանկերի)՝ 2,3—3,6 սմ, պոչի երկարությունը (առանց ծայրի մազերի)՝ 4,1—7,8 սմ:


2. Կովկասյան փոքր աքիս (*Mustela nivalis caucasica* Barr. Ham.). Սրա մարմնի երկարությունն է 13,6—18,5 սմ, ետևի թաթի երկարությունը (առանց ճանկերի)՝ 2,2—3 սմ, պոչինը (առանց ծայրի մազերի)՝ 3,3—5,6 սմ:

Այս երկու ձևերի էլ արուններն ավելի խոշոր են, քան էգերը: Մեզ մոտ ավելի հաճախ հանդիպում է Կովկասյան մեծ աքիսը: Հայաստանում թե առաջինը և թե երկրորդը ամեն տեղ էլ հանդիպում են, բայց աննշան քանակով:



Այն մշակովի հողերում, որտեղ գյուղատնտեսության փաստառւ ժկնանժան կրժողներ կան, աքիսների որսը միանգամայն անցանկալի է: Աքիսներին ընդհանրապես որսում են զանազան թակարդներով, որոնք հաճախ այլ կենդանիների համար էլ են դրվում, ինչպես նաև փոքր լիցքի հրացանով՝ եթե միայն որսի ժամանակ պատահմամբ հանդիպում են նրանց:


Ինչ տեղերում աքիսները հաճախ են վաղվզում, նրանց լավ որսում են փոքր չափերի աղեղնավոր թակարդներով (նկ. 5a),



Նկ. 5. Թակարդ (A) աղանառ (Б, Б) սառցափոր (Г)

զբված ուղղակի կոժանների վրա: Առանձնապես լավ արդյունք է ստացվում, երբ թակարդները փոքր ինչ քողարկած դնում են աքիսների բների ժուաքի մոտ, նրանց հաճախած ժայռերի ծերպերում, դարիվերների տակ և գետալիների մոտ՝ ափերի նեղ շերտերում:

Աքիս որսալու համար ինքնաշեն թակարդներից հաջողու-



Նկ. Թ. Զանաղան պոմպի թակաբլուր

Թյամբ կարելի է օգտագործել կոճղաթակարգները: Դրանց կա-
ռուցվածքը ցույց են տալիս № № 6A և Б նկարները: Առաջին
դեպքում որպես սեղմիչ մաս ծառայում է քարեր բարձած տախ-
տակը, իսկ գրավչանյութն ամրացնում են հսկիչի մասերից
մեկի վրա: Երկրորդ տիպի դեպքում (նկ. 6B) օգտագործված է
ծառի ձեղքած մի կոճղ, իսկ գրավչանյութն ամրացնում են ան-
միջապես հսկիչի վրա կամ կոճղի վերին կիսին այն հաշվով,
որ աքիսը՝ գրավչանյութը վերցնելիս կպչի հսկիչին: Իր կառույց-
ման սկզբունքով կոճղաթակարգից մի փոքր տարբեր է կորեա-
կան թակարգը (նկ. 6B), սա էս, ինչպես և նախորդ երկուսը,
պատրաստված է ձուքի տակ գտնվող նյութից և շատ հեշտ է
սարքել:

Որսի թակարգները պետք է պատրաստել նախօրոք, իսկ
որսի սեղոնին ամրացնել գրավչանյութը (փոքր թռչուն, մուկ
կամ թեթևակի տապակած ճարպի կտոր), և հաճախակի ստուգել:
Որսի սեղոնը վերջանալուց հետո ծուղակները և թակարգները
պետք է հավաքել կամ այնպիսի վիճակի բերել, որ չգործեն:

Աքիս որսալու համար օգտագործում են նաև ակնատներ,
(նկ. 5B) որոնց սարքում են այդ կենդանիների կաժանների վրա,
կամ դրանց ձևափոխությունը՝ «աթոռակ» (նկ. 5B), որի վրա
գրավչանյութը կապում են ինքնորսի վերին մասին: Աքիսների
համար ակնատի օղակները պատրաստում են բարակ ձկուն, բայց
միաժամանակ և ամուր, չկտրվող մետաղալարից:


Աքիս որսալու յուրահատուկ հարմարանք է «սառցի սա-
փորը» (նկ. 5Г): Այդ սափորը հետեյալ կերպ են պատրաստում.
ձմռանը, երբ սառնամանիք օրերը կայունանում են, դույլը լցնում
են ջրով, և երբ վերջինս 4—5 սմ շերտով սառչում է, շիկացած
երկաթով կենտրոնում անցք են բացում մինչև ջուրը և ներսի-
չսառած ջուրը թափում են: Այս անցքի տրամագիծը լայնաց-
նում են մինչև 4—5 սմ և դույլի վրա դրսից և տակից տաք ջուր
են ածում: Այնուհետև «սառցի սափորը» իր կաղապարից (դույ-
լից) հանում են: Այս ծուղակի հատակին մի կտոր տապակած
միս կամ ճարպ են դնում: Ծուղակը դնում են այն տեղերում,
որտեղ աքիսները հաճախ վազվզում են: «Սառցի սափորը» ստո-
րին մասով թաղում են ձյան մեջ կամ թի նրա եզրին մոտ քա-

քեր կամ ճյուղեր են դնում, որպեսզի աքիսները հեշտությամբ ելնեն այդ որոգայթի վրա:

Աքիսի մորթին հանում են գուլպայի նման, այսինքն բերանի կողմից առանց պոչամասի մոտ կտրելու: Գուլպայի նման հանելը սկսվում է շուրթերը և քիթը կտրել Վիսկոնտիով: Այնուհետև մորթը գլխի վրա աստիճանաբար շուռ են տալիս, մորթափառը (մաշկը) դեպի գուրս և վզի վրա քաշում: Հետո հանելով մորթը վզից և ուսերից գուրս են քաշում առջևի ոտքերը մինչև ճանկերը և կտրում մատների վերջին հոգերը: Պոչը քերթում են առանց պոչի մաշկը հերձելու: Ետևի ոտքերն ազատում են նույն ձևով, ինչ որ առջևինը, իսկ ուղիղ աղիքի ծայրի մասը կտրատում են հենց մորթու մոտ: Ամբողջ մորթը հանելուց հետո մաքրում են չորացած արյունից, փառերից, մսի կտորներից և ճարպից: Մորթը հանելիս շատ զգուշ պետք է լինել, որպեսզի սպիտակ մուշտակը արյունով և ճարպով չկեղտոտվի, որպեսզի հետո հարկ չլինի լվանալու կամ քերելու:

Երբ հանած մորթը պատշաճ զրուծյան է բերվում, ձգում են ուղղիչի վրա մազը դեպի ներս:

Աքիսի մորթու համար ուղղիչներ պատրաստում են բարակ տախտակից այնպես, որ լայնությունը և երկարությունը միմյանց հարաբերեն այնպես, ինչպես 1:6: Քանի որ բոլոր աքիսները նույն մեծության չեն, ապա պետք է տարբեր չափերի (նկ. 7) մի քանի ուղղիչ



Նկ. 7. Ուղղիչներ և քիսի մորթու ուղղումը նրանցով

ներենալ: Ուղղիչը երկու մասից են պատրաստում՝ կտրելով տախտակը անկյունագծով: Ուղղիչների արտաքին անկյունները կտրում են այնպես, որ թեթևակի կլորավուն լինեն: Աքիսի մորթը ուղղիչի վրա ձգելիս բերանի կողմից մտցնում են նախ ուղղիչի այն մասը, որ նկարի վրա «A» տառով է նշանակված, ապա նրա երկրորդ կեսը («B») այնպես, որ

վերջինս սղոցած գծով սահի արդեն մորթի մեջ սարքած առաջին կեռի վրայով: Մորթիները պետք է չորացնել չոր շենքում: Մորթափառի կամ մաշկի բարակության պատճառով, աքիսի մորթը չորանում է 2—3 օրում. այն ժամանակ ուղղիչը զգուշությամբ հանում են, և մորթը (7) կարելի է պատրաստ համարել մթերող կազմակերպություններին հանձնելու համար:

3. ՊԱՐՍԿԱԿԱՆ ՍԿՅՈՒՌ

Sciurus persicus anomalus Gm.

Թփային ենթանտառ ունեցող բարձրաբուն հաճարի ու կաղնու անտառում՝ մեզ մոտ հանդիպում են սկյուռներ: Ուղղաձիգ գծով այդ կենդանիները Հայաստանում բնակվում են ծովի մակերևույթից 700-ից մինչև 1700 մետր բարձրության վրա:

Մեր սկյուռների գունավորումը ձմեռը և ամառը համարյա միակերպ է: Նրանց մեջքը գորշ-թխավուն է, պոչամասը (մեջքի հտեի մասը)՝ սև, երբեմն սև գույնն ավելի հեռու է տարածվում՝ ընդգրկելով համարյա ամբողջ մարմնի վերին մասը: Ծոծրակը սովորաբար ավելի բաց գույնի է, հարդադույն-թխավուն, կողքերը և կոկորդը, փորը և աճուկները՝ դեղնավուն, նարնջագույն: Պոչը թուխ է՝ խառը ժանդագույն—շիկավուն երանգով: Ականջներն ամառը մազավունջ չունեն, ձմռանն ընդհակառակը, մինչև 70,5 մմ երկարության փնջերով են:

Մեր սկյուռների մարմնի միջին երկարությունն է 22 սմ, պոչը՝ 15,5 սմ, ականջի բարձրությունը՝ 2,8 սմ, հտեի թափը՝ 5,5 սմ:

Ձմեռային մուշտակը երկարամազ է, բայց շատ ավելի պակաս փափուկ և թավոտ, քան սովորական սկյուռինն է: Մեր սկյուռների ձմեռային մուշտակի ծոծրակի քիստամազի երկարությունն է մինչև 20,5 մմ, աղվամազը՝ մոտավորապես 10 մմ, մեջքի և պոչամասի (մեջքի հտեի մասի) քիստամազը հասնում է 24 մմ, իսկ աղվամազը՝ մինչև 12 մմ: Փորի մուշտակի մազերի երկարությունն է մոտավորապես 15 մմ: Աշնանային մազափոխությունը կատարվում է ամբողջ սեպտեմբերի ընթացքում:

Պարսկական սկյուռի բիոլոգիան մեզ մոտ շատ քիչ է ուսումնասիրված: Գրականության տվյալների համաձայն այս կեն-

դանիները բնակվում են ծառերի փչակներում, որտեղ և սարքում են իրենց բները՝ մեջը առավելապես ժամուռ և չոր տերևներ փռելով: Իրենց կյանքի եղանակով պարսկական սկյուռները ցերեկային կենդանիներ են: Սկյուռներն ամբողջ օրերով շարժման





Նկ. 8. Սկյուռ

մեջ են գտնվում՝ ժաղցելով ծառերի բների վրա, ծառից ծառ ցատկոտելով և գետնի վրա վազվզելով:

Պարսկական սկյուռների սնունդն են կազմում առավելա-

պես հաճարը և պնդուկը կամ ախիլը, նրանք ուսում են նաև ընկույզ, կաղին, զանազան պտուղների ու հատապտուղների կոթերներ ու սերմեր: Այս կենդանիները ձմեռվա համար կերի պաշար են ամբարում:



Նկ. 9. Կոճղաթակարդ սկյուռի համար և նրա լաբման ձևը

որ պարսկական սկյուռն էլ պետք է որսվի զանազան ինքնորսներով՝ որպես գրավչանյութ օգտագործելով նրանց սիրած կերը: Որպես օրինակ բերում ենք սկյուռ որսալու մի կոճղաթակարդ


Պարսկական սկյուռն ապրիլին իր բնակարան-փչակում 3-ից մինչև 7 ձագ է բերում: Էգի հղիությունը մոտավորապես 4 շաբաթ է տևում: Հաջաքած տվյալների հիման վրա հաստատված է, որ մեզ մոտ բացառված չէ սկյուռների երկրորդ հղիությունը նույն տարում, քանի որ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին կաթնատու էգեր են նկատվում:

Մեր սկյուռները հազվադեպ դեպքերում ամառը դալթում են: Այդ ժամանակ նրանք փոքր լումբերով են տեղափոխվում:

Հայաստանում պարսկական սկյուռները մեծ քանակությամբ հանդիպում են Դիլիջանի, Կիրովականի և Իջևանի շրջաններում, փոքր քանակներով՝ Կարմիրի և Ալավերդու շրջաններում:

Մեզ մոտ սկյուռներին որսում են առավելապես հրացանով: Այդ նպատակի համար ափիլի լավ է վերցնել 20, 24, 28 և 32 տրամաչափի հրացաններ՝ նվազ լիցքերով: Սովորական սկյուռի (*Sciurus vulgaris*) որսի փորձից հիշելով՝ կարելի է ենթադրել,

(նկ. 9), որի ստորին տախտակն անշարժ ամրացած է ծառերի արանքում, իսկ վերինը, որի վրա քարեր կամ կոճղակտոր է դրված, խեղդում է սկյուռին, հենց որ սա կպչում է հսկիչին: Լարման մանրամասնությունը պատկերացված է նույն նկարի վրա ցածում, ըստ որում հորիզոնական ձողիկը, որին ամրացնում են զրավչանյութը, պինդ մեխում են հսկիչի մի կեսին: Սկյուռ որսալու համար նույն հաջողությամբ կարելի է օգտագործել և նկ. 6A-ում ցույց տրված կոճղաթակարգը: Այլև նույն նպատակով կարելի է օգտագործել փոքր համարների թակարդները (Ձև № 0 և 1): Վերջիններս սարքում են ձմռանը, ձյան վրա, առանց զրավչանյութի, սկյուռների այն կածանների վրա, որոնցով այդ կենդանիները ծառից ծառ են վազում: Այդ թակարդները նույն հաջողությամբ կարելի է օգտագործել նաև նրանց մեջ զրավչանյութ դնելով՝ չորացրած միջրդ, սնկեր և սկյուռների համար ուտելի այլ կերեր: Փափուկ և բարակ՝ 0,3—0,5 մմ տրամագծի մետաղալար ունենալու դեպքում սկյուռներին կարելի է որսալ նաև օդակով: Սկյուռները հեշտությամբ ընկնում են այն օդակների մեջ, որոնք սարքված են բիջ ձողերի վրա: Օդակի ազատ ծայրը կապում են մոտակա ճյուղից կամ ուտից, սովորաբար ամեն մի ձողի վրա ոչ ավելի քան 3—4 հատ օդակ են ամրացնում:



Նկ. 10. Մոեղյակի համար (A) և սկյուռի չորացրած մորթիները

Սկյուռի մորթը հանում են խողովակի ձևով: Ամբողջ մարմնի վրա կտրվածք են անում սկսած ետևի ոտքերի թաթերի ներքաններից, դրանց հետևի կողմով մինչև հետանցքը (նկ. 10 կետագծով): Հետո մորթին անջատում են ետևի ոտքերից՝ մատներից մինչև պոչի հիմքը, պտտառում են մաշկը հետանցքի մոտ և

դուրս քաշում պոչի ողները: Այնուհետև շատ հարմար է մսեղյակը ետևի ոտքերից պարանոց օղակով ամրացնել և մորթին հանել դեպի ցած ձգելով: Մորթը հեշտ է հանվում մինչև առջևի ոտքերը: Առջևի ոտքերից մորթը մինչև մատները հանում են շուռ տալով՝ մորթափառը դեպի դուրս, և մատների վերջին հոդերի մոտ դանակով կտրելով: Ճիշտ նույն ձևով՝ դանակով կտրում են ականջների հիմքերը՝ պատառում կոպերը աչքերի մոտ, շուրթերը կտրում քթի ծայրի մոտ:

Հանած մորթը խնամքով մաքրում են մսի կտորներից ու ճարպից և առանց ուղղիչի, միայն ձեռքերով ուղղելով՝ կախում են չոր շենքում մինչև չորանալը (նկ. 10): Սկյուռի չորացած մորթիները թողնում են մաշկափառը դեպի դուրս, իսկ մաղը ներսի կողմում և այդ ձևով հանձնում մթերող կազմակերպությանը:

Մեր սկյուռի միսը միանգամայն պիտանի է ուտելու համար: Մ. Վ. Շիրկովսկու կարծիքով այդ միսը նուրբ է և հաճիկ համ ունի: Սկյուռի մսեղյակի կշիւր հասնում է 450 գրամի:


4. ՓՈՌԲՐԱՍԻԱԿԱՆ ԳԵՏՆԱՍԿՅՈՒՌ

Citellus xanthoprymnus Benn.

Փոքրասիական, գետնասկյուռները (կամ ճատան՝ մկները), միջին մեծությամբ կենդանիներ են. զբանց մարմինն ունի 14,5—23,5 սմ երկարություն, ետևի թաթը՝ 3—4 սմ, և պոչը (առանց ծայրի մազերի)՝ 3,3—5,5 սմ: Այս կենդանու ականջները մուշտակից քիչ են դուրս ցցված և 0,5—0,7 սմ բարձրությամբ ունեն:

Մեր գետնասկյուռների գունավորությունը թխավուն-ափաղագույն է: Ներտառարդ կենդանիներն ավելի գորշավուն են, քան չափահասները: Կոկորդը, շուրթերը և թաթերի ներքին մակերեսը սպիտակ են, կուրծքը և փորը՝ գեղնավուն-սպիտակ: Պոչի վերևի կողմը մի փոքր ավելի մուգ է, քան մեջքը, իսկ տակի կողմը դեղնավուն է: Փոքրասիական գետնասկյուռի մուշտակի մեջքի կողմի մազի երկարությունն է (ըստ Սվիրիդենկոյի)՝ 6—12 սմ, փորի կողմինը՝ 8—13 սմ. բնի մուշտակային ծածկույթը համեմատաբար հավասար է: Պոչի ծայրի մազերի երկա-

գությունը հասնում է մինչև 2,8 մ: Գետնասկյուռի մագափո-
խությունը տեղի է ունենում տարեկան մի անգամ: Այն սկսվում
է դարնանը, ձմռան քնից զարթնելուց մոտ մեկ ամիս հետո, և
տևում է մինչև ամառվա վերջը կամ աշնան սկիզբը: Մագափո-




Նկ. 11 Գետնասկյուռ

գությունը լրիվ կատարվում է միայն ձմռան քուն մտնելուց
մի փոքր առաջ:

Փոքրասիական գետնասկյուռը բնակություն է հաստատում
քարձր լեռնային հարթությունների վրա, քարերի մեջ և հան-
դիպում է թե հարթ տեղերում և թե լեռների ու բլուրների լան-
ջերին: Ըստ Սվիրիգենկոյի փոքրասիական գետնասկյուռներն
իրենց բներն առավելապես այնպիսի տեղերում են փորում, որ-
տեղ մեծ քանակությամբ՝ կիսով չափ հողի մեջ թաղված քարեր
կան: Այդ քարերի դասավորության համեմատ էլ գետնասկյուռ-
ները փորում են իրենց բները հողի մեջ:

Փոքրասիական գետնասկյուռների բնի անցքը սկզբում
բավական թեք է իջնում, ապա ուժեղ կերպով զեպի ցած դառ-
նում, հետո դարձյալ ոչ մեծ թեքությամբ գնում, անցքը վերջա-
վորվում է նստարնով (Նկ. 12): Ըստ վերոհիշյալ հեղինակի,
փոքրասիական գետնասկյուռի բունը (нора) մեծ մասամբ սարք-
ված է լինում քարերի տակ: Այս կենդանու բնի տրամագիծը
6—7 մ է, իսկ նստարունը (гнездо) գնդաձև է, որի ամենամեծ
տրամագիծն է 15—16 մ: Նստարնի խշտին կաղնիված է խոտա-
քույտերի, զնալի տերևներից: Փոքրասիական գետնասկյուռի

բունն ունենում է 1—3 մուտքի անցքեր, որոնք սովորաբար անմիջապես քարի հզրի մոտ են լինում: Բնի անցքի ամենա-
արտաքին մասը ձաղարաձև լաշնուցած է, իսկ զրա մոտ հոդի-
երեսին մի մաքուր ու հարթ փոքր տեղ կա, որի վրա զետեմ-



Նկ. 12. Գեոստախյանների սկսնման (ըստ Օվկրիգենիոյի) Ա. ուղղահայաց կտրվածքը, 1. քարերը կիսով չափ թաղված, 2. բնի մուտքը, 3. վերև գնացող ճանապարհը, 4. հողով լցրած ճանապարհները, 5. գետնասկյուռի նստաբուռնը, Ե. բնացանցի պլանը

սկսում են արեւելքից միաժամանակ դիտում են շրջապատը:

Վատանգի դեպքում գեանասկյուռները վայրկենապես թաք-
նորում են իրենց բներում:

Փոքրասիական գեղնասկյուռի բնիկը միատիպ է հայաստանյան խորուխյան եւ հասնում էին բնեւորում հաճախ զլիս ձգվող:

անցքից կողքի փակ անցքեր են ձուլափորվում, որոնցից մի քանիսի մեջ գետնասկյուռները հող են լցնում, իսկ մյուսներում՝ փթիլ: Տեղ-տեղ մեր գետնասկյուռները բնակվում են ժայռերի ձեռպներում և չնգիլների քարափլվածքների մեջ, իսկ Մալիտակի լեռնանցքի շրջանում մենք գետնասկյուռներ ենք տեսել, որոնք ապրում էին հողագրասյուռների հիմքի մոտ կիտված քարերի մեջ:

Գետնասկյուռները ցերեկվա կենդանիներ են: Սրանք ամենից ավելի գործոն են լինում ցերեկվա ժամը 10-ից մինչև 15-ը: Օրվա այդ ժամերին շիշյալ կենդանիները բնից բուռն են վազում և հետենգով սնունդ փնտրում. առանձին ունհատներ արթնոն են շինում ժամը մինչև 17—19-ը, տեղ-տեղ՝ ավելի երկար: Տարվա ամբողջ ցուրա ժամանակը այս կենդանիները քնով են անցկացնում: Տվյալներ կան, որ փոքրասիական գետնասկյուռների ձմռան քունը սկսվում է օդոստոսին (Սփիրիդենկո) և կամ սեպտեմբերին (Շիգլովսկի): Գարնանը գետնասկյուռները ձմռան քնից արթնանում են ապրիլի սկզբին:

Մեզ մոտ այս կենդանիները սնվում են դանազան բույսերով. նրանք ուտում են նրանց թե վերերկրյա և թե ստորերկրյա մասերը (կոճղիզներ, ցողուններ, տերևներ, արմատներ): Պեռ տեղերում գետնասկյուռները խիստ ֆլատում են հացահատիկների մշակույթներին: Ահա թե ի՞նչ է գրում Սփիրիդենկոն այդ մասին. «Նրանց ֆլատակար գործունեությունը սկսվում է միայն հատիկների հատուռնացման պահից: Ի՞նչնեով իրենց բնակավայրերից, նրանք սկսում են ֆլատել հացարույսերի արտերի եզրերը և՛ միայն շերտ առ շերտ ոչնչացնելով, մտնում են ցանրերի խորքերը: Գետնասկյուռը՝ կանգնելով ետևի թաթերի վրա՝ կրծում պոկում է հասկը և քաշ տալիս մինչև մատակա բունը, որտեղ հանդիստ կերպով ընտրում է հատիկները՝ թողնելով դատարկ հատիքը»:

Փոքրասիական գետնասկյուռը ամեն անգամ ծնում է 4-ից մինչև 6 ձագ: Հունիսի սկզբին ձագերը զնուս մոր կաթով են սնվում: Ամսվա վերջին նրանք 13—16 սմ երկարությամբ հասնելով՝ սկսում են ցրվել: Մեր գետնասկյուռներն ըստ երևույթին օդոստոսի սկզբին հոսանդուն կերպով պատրաստվում են ձմռան քնին. նրանք թարմ խշտի են անում իրենց նստարները և շատ ցիրանում են:

Փոքրասիական գետնասկյուռները Հայաստանում տարածված են Սպիտակի, Դուղքենդի, Ալազյազի և Արթիկի շրջաններում: Մասամբ նրանք հանդիպում են Ամասիայի և Դուկասյանի շրջաններին հարավային, Կիրովականի շրջանի հարավ-արևմտյան, Քալինի և Ապարանի շրջանների հյուսիս-արևմտյան մասերում և տեղ-տեղ էլ Ադինի շրջանում:


Փոքրասիական գետնասկյուռի որսը Հայաստանում կարևոր է երեք պատճառով. այդ կենդանիներին ոչնչացնելով, տեղական բնակչությունը պաշտպանում է իր հացահատիկային ցանքերը քնասատու կրծողներից. այնուհետև, որսալով դետնասկյուռ, նրա մորթն է ձեռք բերում, որի գիմաց մթերոդ կաղմակերսլությունները դրամ և գեֆիցիտային ապրանքներ են տալիս, և վերջապես, բացի դրանից, գետնասկյուռի միսը կարիլի է օգտագործվում որպես սնունդ, որովհետև այն ոչ միայն ուտելի է, այլև համեղ է: Գետնասկյուռի ճարպը սննդականից բացի՝ ունի նաև տեխնիկական նշանակություն:

Գետնասկյուռի որսը կատարում են դանադան կղանակներով: Ամենապարզ եղանակը, նրանց բներից ջրով գուրս քշելն է: Այս բանն ավելի լավ հաջողվում է օրվա կիսին: Նրանց բնից գուրս քշելու համար սովորաբար բավական է 2—3 գույլ ջուրը: Հաճախ լավ արդյունք է ստացվում, եթե բնի մեջ ջուր լցնելու ժամանակ, ափստեղ նաև մանր հող են ածում: Այս եղանակով հողի երեսը հանած գետնասկյուռը ցնխոտված է լինում և իհարկե պետք է մաքուր ջրով լվացվի: Դեպքեր են լինում, երբ ջուր ածելու ժամանակ գետնասկյուռը բնի խորքում արագորեն հողեխցան է սարքում և նոր անցք բացում ուղիղ գնալի վրա:

Որտեղ մոտիկ ջուր չկա՝ գետնասկյուռներին պետք է որսալ թակարդներով, օղակներով կամ ծուղակներով:

Գետնասկյուռ որսալու համար աղեղնավոր թակարդներից լավ արդյունք են տալիս № 0 և 1 թակարդները (նկ. 5 A): Վերջիններս սարքում են առանց գրավչանյութի, բայց մի փոքր քողարկված, գետնասկյուռի բնի մուտքի մոտ կամ գրավչանյութով (հաց)՝ այդ կրծողների մի քանի բների շրջանում: Անհրաժեշտ է թակարդները կապել շղթայի կամ մետաղալարի և ձողի միջոցով:

Գետնասկյուռի համար օղակներ պատրաստում են բարակ




Նկ 13. Օղակներ (A), պարանիկ (B) և Գոնի ծաղիկ (C)

և փափուկ մետաղալարից կամ ձիու 10—15 հյուսած մաղերից: Վերջին դեպքում ձիու մաղերից պատրաստած օղակի վրա պետք է 3—4 սմ երկարության սնամեջ ոսկոր (թուշուխի կամ նապաստակի) հազցնել, ալյապես օղակն ընկած գետնասկյուռը հեշտությամբ կրծում է այն (նկ. 13 A), օղակի համար բարակ մետաղալար օգտագործելու դեպքում կարթ են սարքում (նկ. 25a), որպեսզի օղակն ընկած գետնասկյուռը չուրի լարը: Կարթ պատրաստում են բարակ օղակապալին երկաթից, որը և մետաղալարը ոլորվելու ժամանակ լավ պաշտպանում է կտրվելուց:

Ավելի բարդ է պարսանետի պատրաստումը, որը շատ գանազան տիպերի է լինում (տես „Справочник промыслового охотника“): Նկ. 13 Б-ով պատկերացված է ամենից հեշտ պատրաստվող պարսանետը: Այս ինքնատրոսի շրջանակը շինված է ձողիկներից, նրա լայնական ձողերը մեխերով ամրացած են հատուկ փորված տեղերում: Շրջանակի ներքին կողմերի տակը երկարական փորվածքներ կան (10), որպեսզի նրանց մեջ շարժվի մուրճի սեղմիչ ձողիկը (25): Աղեղն (8) ամրացնում են պարսանետի հետևի կողմից դուրս ցցված աղեղիկի (5) ելուններին և, բացի այդ, փոկով կապում են շրջանակին (9): Հսկիչը (3) իր վերին մասում ունի մի մաս (a), որով պարսանետը լարելիս կառչում է աղեղիկին (4): Աղեղը պատրաստում են չոր առած գական փայտից: Ուղեւ լար ամենից լավ է օգտագործել բարակ և փափուկ մետաղալար: Լարն անց են կացնում մուրճի վերին մասում բացած անցքով: Լարված պարսանետը սարքում են գետնասկյուռի ընդ անցքի դիմաց (ինչպես ցույց է տրված նկարի վրա): Գետնասկյուռը հսկիչի և շրջանակի արանքով գետնի երես դուրս գալիս հրում է հսկիչին, վերջինս դուրս է թռչում աղեղից, և աղեղի ազատված լարը մուրճով սեղմում է բնից դուրս եկող կենդանուն: Երկաթալար և 1—1,5 սմ տրամագծանի աչքեր ունեցող երկաթյա ցանցի առկայության դեպքում դժվար չէ գետնասկյուռներին համար Դոնի կոչված ծուղակ պատրաստել (նկ. 13 Б): Այս ծուղակը շինում են 9,5—10 սմ տրամագծով և 35—40 սմ երկարության խողովակի ձևով: Խողովակի մի ծայրին, ինչպես և բուն խողովակի վրա՝ մետաղալարի կմախքի վրայով ցանց են քաշում: Խողովակի երկրորդ ծայրը, որը վերջանում է հաստ մետաղալարի օղակով, ունի օղակի վրա ճոճվող մի աղեղիկ: Վեր-

Չինս այնպէս է կառուցված, որ հեշտութեամբ կարող է բացվել խողովակի մեջ, իսկ հակառակ կողմը բացվել թույլ չի տալիս մետաղալարի շրջանակը կամ խողովակի օղակը: Դռնի ծուղակը ամբողջովին մացնում են գետնասկյուռի բնի անցքի մեջ: Շարժվելով դեպի դուրս գետնասկյուռը մտնում է խողովակի մեջ և այլևս աշտեղից դուրս դալ չի կարողանում:

Գետնասկյուռի մօրթը հանում են շերտ շերտ (կամ զորգակերպ): Կենդանու դիտես ամբողջական մարմնի վրա երեք հատված են անում, առաջինը՝ ստորին շուրթից՝ վզի, կրծքի և փորի միջին գծով մինչև պոչի հիմքը, երկրորդը՝ առջևի ոտքերի ներքին կողմերով՝ կրծքի վրայով, և երրորդը՝ հետևի ոտքերի հետին կողմից երկարական հատվածի ամենածայրի կետով (նկ.



Նկ. 14. Մտեղյակի կտրվածքների սխեման (A) և գետնասկյուռի մօրթու ուղղումը (B)

14A): Դնելով գետնասկյուռը մեջքի վրա և ոտքերը դեպի կողմերը ձգելով՝ մատներին և դանակի օգնությամբ անջատում են մօրթը ճարպից և մսից: Պոչի ողնիքը դուրս են քաշում՝ առանց պոչի մաշկը խաղել ձգելու: Ոտքերից մօրթը հանում են մինչև նախադաստակի հողը և ոտնաթաթը (նկ. 14A):

Հանած մօրթը մաքրում են մաի կտորներից և խնամքով ձարպաղրելու՝ քերելով ճարպը պոչից դեպի գլուխը: Ճարպա-

զրկած մորթն ուղղում են տախտակի վրա, մաշկափառը վերև, աջնպես, որ մորթու երկարությունը լայնությունից 5,5 անգամ ավելի լինի: Մորթու եզրերը ամրացնում են տախտակին մանր մեխերով (նկ. 146):

5. ՇԻԿԱՌՆԵՏ

Glis glis L.

Շիկառնետը փոքր և չափազանց դյուրաշարժ կենդանի է: Նրա առջևի և հետևի վերջավորությունները կարճ են և կլուստ են սուր ճանկեր: Պոչը մարմնից մի փոքր կարճ է, թավոտ և օգնում է շիկառնետին ցատկումների և ճյուղերի վրա մագլցելու:



Նկ. 15. Շիկառնետ

Ժամանակի Աչքերը խոշոր են և սև, բեխերը երկար: Ականջները մեծ են, շարժուն, նկատելի կերպով դուրս են ցցված մուշտակից:

Մեր շիկառնետի մարմնի երկարությունն է 11,5—18,5 սմ,

պոչինը՝ 0,5—16,5 սմ, ականջի բարձրությունը 1,3—1,9 սմ, հետևի թաթի երկարությունը՝ 2,4—3,0 սմ, Չափահաս շիկառնետի կշիռը հասնում է 163 գրամի:

Մարմնի և պոչի վերին կողմի գունավորումը տատանվում է ծխամաձ-գորշից մինչև գորշավուն-թուխը շիկավուն նրբերանգով: Կենդանու ամբողջ տակը, շուրթերը և թաթերի առջևի կողմերը սպիտակ են: Մեր առավելագույն ծխամաձ-գորշ գույնի շիկառնետների մեջ ավելի հաճախ երիտասարդ կենդանիներ են հանդիպում:

Հասուն մուշտակի քիստամազի երկարությունը մեջքին հասնում է մինչև 20 սմ, իսկ աղվամազինը՝ մինչև 10 սմ:

Շիկառնետի մազափոխությունը կատարվում է տարեկան մեկ անգամ: Չափահաս արուները և ստերը էգերը մազը փոխում են օգոստոսին: Մազափոխությունը տևում է մոտ 27—28 օր: Չափահաս էգերի մազափոխությունը կանգ է առնում հղիության ժամանակ: Երիտասարդ շիկառնետների մազն անհամաչափ է փոխվում, այն կատարվում է ամառվա ամբողջ երկրորդ կիսի ընթացքում:

Այս կենդանիների մազափոխությունը սկսվում է նրանով, որ քիստամազը թափվում է մարմնի ամբողջ վերևի մասից: Մաշկն այդ ժամանակ մնում է սպիտակ: Ըստ Մալանգենբերգի մաշկի մզացումը լավ նկատելի է դառնում, երբ քիստամազը համարյա լրիվ կերպով թափվում է, և կենդանին ծածկված է մնում կարճ աղվամազով ու հադիվ նկատելի նոր քիստամազով: Հայաստանի պայմաններում չափահաս շիկառնետի քիստամազի թափվելը մեքանիսի վրա լավ նկատվում է սկսած հուլիսի վերջին օրերից, իսկ երիտասարդների (նախորդ տարվա ծնվածների) մազափոխությունը երբեմն ուշանում է մինչև օգոստոսի սկզբի օրերը: Ընդհանրապես այս կենդանիների մազափոխության ժամկետները մասամբ կախված են նաև սննդից և առողջական վիճակից: Վտիտ և հիվանդ շիկառնետներն ավելի ուշ են մազը փոխում, քան գերերն ու առողջները:

Շիկառնետների բաղմացումը քիչ է ուսումնասիրված: Ըստ Մալանգենբերգի, այս կրծողների զուգավորումը տեղի է ունենում հունիսի վերջին երրորդում: Ըստ Մարկովի շիկառնետի հղիությունը տևում է 6 շաբաթ, ըստ այլ հեղինակների՝ 3—4 շաբաթ:

Շրկառնեաք յուրաքանչյուր անգամ ծնում է 3-ից մինչև 8 ձագ: Շրկառնեաքները ծնվում են մերկ և կույր: Ծնվելուց. իրեք շաբաթ հետո ձագերը ծածկվում են մուշտակով, աչքերը բացում են և սկսում են բնում սողալ: Սկզբում մայրն իր ձագերին կաթով է կերակրում, հետո նրանց համար զանազան ուտելիքներ է բերում: Իսկ երբ երիտասարդ շրկառնեաքները սկսում են բնից դուրս սողալ, նրանք շատ շուտ վարժվում են շրջապատին և արդեն ինքնուրույն կյանք վարելով՝ աստիճանաբար ցրվում են մոտակա հարմար բնատեղիները:

Շրկառնեաքները կապված են ծառերով. ծածկված տարածությունների (անտառների, այգիների) հետ: Նրանք գիշերային կենդանիներ են. մթնշաղն սկսվելուն պես՝ շրկառնեաքները սկսում են հոտանգուռ կերպով կեր փնտռել: Նրանք մազլցում են ծառերի վրա, ցատկում՝ ճյուղից ճյուղ և ծառից ծառ: Եթե ծառերի միջև կապն ընդհատվում է, նրանք իջնում են ցած, դեռնի վրայով վազում և ապա նորից ծառը բարձրանալով՝ շարունակում են ավելի հեռունները գնալ այն կողմը, որտեղ նրանց համար կա շատ կեր: Կշտանալով շրկառնեաքները գիշերվա ընթացքում մի քանի անգամ հանգստանում են, իսկ առավոտվա դեմ վերադառնում են իրենց նստարւունը և այնտեղ կծկված քնում են ամբողջ օրը:

Շրկառնեաքների ամենատիրած կերակուրներն են հատապտուղները, զանազան պտուղների կորիզները, կաղինները և դաճադան ընկույզները: Իսկ եթե շրկառնեաքն այդ կերերը չի գտնում, ապա սնվում է միջատներով կամ որոշ տեսակի ծառերի կեղեք կրծելով:

Շրկառնեաքները զգալի ֆլաա են հասցնում պտղատու և խաղողի այգիներին: Այգիներում նրանք շատ պտուղ են փչացնում՝ կրծելով պտղամիսը և ուտելով կորիզները կամ սերմերը: Օրինակ, ըստ Սպանգենբերգի, շրկառնեաքի հասցրած ֆլասի հետևանքով խաղողի այգիներում տարեկան կորչում է բերքի մոտավորապես 20—25 տոկոսը:

Շրկառնեաքի սնվելու եղանակի սեզոնականությունը ընդհանուր գծերով հետևյալ կերպ կարելի է բնութագրել. զարնանալից կենդանիները սնվում են առավելապես միջատներով և ծառերի կեղեքով, ամառը նրանք ուտում են հատապտուղներ (մօրի,

թութ), ապա բացի թվածից նրա սննդի մեջ ավելի ու ավելի մեծ տեղ են բռնում զանազան կորիզավոր ծառերի սերմերը, իսկ աճնանը՝ ընկույզները, կաղինը և որոշ հատապտուղներ: Ուշ աշնանը շիկառնետները շատ գերանում են և սկսում են պակաս ուտել, նրանց սննդի տեսակները մեջ դարձյալ հանդես է գալիս ծառերի կեղևը, այլև դրա հետ մեկտեղ նրանք օգտագործում են իրենց սիրած կերերի այն պաշարները, որ հավաքել են առատության ժամանակ:

Տարվա ամբողջ ցուրտ ժամանակը շիկառնետները ձմռան քուն են մտած: Ըստ Շիդլովսկու, Հայաստանում չափահաս շիկառնետները քուն են մտնում հոկտեմբերի սկզբներին, իսկ երիտասարդ կենդանիները՝ նույն ամսվա վերջին: Մեզ մոտ այդ կենդանիները դարնան արթնանում են մարտի վերջին կամ ապրիլի սկզբին: Շիկառնետները ձմռան քուն են մտնում ծառերի փչակներում կամ իրենց բնիքում, որ նրանք փորում են չոր տեղերում՝ հին տնկարկների արժատների արանքներում կամ խիտ թփուտներում: Բներում կամ ծառերի փչակներում նրանք ձմեռն անց են կացնում առանձին-առանձին կամ փոքր խմբերով՝ 3—4 կենդանի միասին: Շիկառնետների քուն մասնիկ միանգամից չի կատարվում, այլ արթնության կարճատև ընդմիջումներով: Քնկիս շիկառնետները կծկվում են, նրանք իրենց գլուխը թաքցնում են փորի վրա՝ հետևի ոտքերի արանքում, իսկ սուղով ծածկում են զագաթը, ծոծրակը, վրդը և ապա մեջքի մի մասը: Շիկառնետները քնի ժամանակ անշարժ են, նրանց մարմնի ջերմաստիճանը նկատելի չափով իջնում է, սիրտը դանդաղ է աշխատում, և մի բույնում ոչ ավելի քան 2—3 անգամ են շունչ քաշում:

Շիկառնետները Հայաստանում օտարածված են անտառային գոտում ամենուրեք, որտեղ կան փշակավոր ծառեր և նրանց պտղաբեր ցեղերը (հաճարի, կաղնի, բոխի, հոնի, խնձորենի, տանձենի և այլն): Ըստ Շիդլովսկու՝ շիկառնետները մեզ մոտ հանդիպում են Կիրովսկանի, Դիլիջանի, Իջևանի, Շամշադինի, Ալավերդու շրջաններում, ինչպես նաև մասամբ Կարսի շրջանի հյուսիս-արևմտյան մասում: Այդ կենդանիները ուղղաձիգ գծով նշված են ծովի մակերևույթից 700-ից մինչև 1700 մետր

բարձրության վրա: Շիկաոնեաների ամենամեծ քանակությունը նշված է 700-ից մինչև 1000 մետր բարձրության գոտում:

Շիկաոնեաների որսը հեշտ է և պարզ՝ շնորհիվ նրանց արտակարգ հետաքրքրության և անզգուշության: Շիկաոնեաները կեր փնտռելիս գլխավորապես տեսողությամբ և լսողությամբ են ջեկավարվում: Այդ կապակցությամբ, որքան շիկաոնեա որսալու համար զրված թակարդը լավ աչքի ընկնող է, այնքան նա ավելի շատ է գրավում այդ կենդանիների ուշադրությունը և նրանք վստահաբար գնում և ընկնում են շատ բազմազան տիպի ծուղակների ու թակարդների մեջ:

Ըստ Սպանգենբերգի, շիկաոնեաների տարածման մի քանի վայրերում դրանց հաջողությամբ որսում են շների օգնությամբ: Շունը գտնում է նրանց իրենց ցերեկային պատասպարաններում, որտեղից նրանց ձուլով դուրս են քշում, այնուհետև նրանց խեղդում է շունը կամ սպանում են փայտով: Շիկաոնեաների որսի ամենատարածված եղանակը զանազան ինքնորսներն են:

Շիկաոնեաները շատ լավ ընկնում են առնետուրս վանդակների մեջ, բայց դրանց պատրաստումը տնային միջոցներով՝ բավական դժվար է: Ավելի հեշտ է, որ որսորդն ինքը պատրաստի ծուղակը: Այդ ծուղակների զանազան տիպերը և նրանց լարման ձևափոխությունները պատկերված են № № 6 A, B, B, Γ նկարներով: Շիկաոնեաներ որսալու համար առաջին երեք կառուցվածքները կիրառելու դեպքում ոչ մի գրավչանյութ հարկավոր չէ, իսկ չորրորդի ժամանակ (նկ. 34) գրավչանյութն ուղղակի հսկիչի վրա են ամրացնում:

Հիշյալ ծուղակներով շիկաոնեաների որսի լավ արդյունք է ստացվում, երբ արկղների փայտի պատերը ներծծվում են այդ կենդանիների մեղով. այդ դեպքում հետագա որսի ժամանակ շիկաոնեաներն առանձնապես սիրով են գալիս դեպի ծուղակը: Այդ նպատակով կարելի է հանձնարարել, որ նոր պատրաստվող ծուղակներում կարճ ժամանակով շիկաոնեաներ պահվեն, որոնց որսացել են արդեն օգտագործված ծուղակներով:

Ծուղակի և արկղից պատրաստված հարմարանքի կաղմությունը պարզ է, և երևում է բերված նկարների վրա: Որսի այդ հարմարանքները պետք է այնպես պատրաստել, որ տախտակների մեջ աբանք չմնա, որքան հնարավոր է քիփ մոտենան իրար:

խիստ ամենալուսանդամոր տեղերը, որ շիկառնետները կարող են կրծել, պետք է բարակ երկաթյա թիթեղներով ծածկել (թեկուղ կոնսերվի ամանների թիթեղով): 16 A և 16 B նկարներով պատկերած ծուղակների մեջ հսկիչի մի ծայրը օդակով կամ կեռով ամրացվում է արկղի հատակին, իսկ հակառակ ծայրը կլուն ունի, որի օգնությամբ և լարվում է ծուղակը (նկ. 16 a):

Շիկառնետների որսի ծուղակները կարելի է դնել ծառերի ճյուղերի անկյուններում տարբեր բարձրությունների վրա, պարզապես զետնի վրա կամ ծառերի միջի ցցերի վրա՝ այդ կենդանիների երթևեկության ճանապարհներին:

Շիկառնետները հեշտությամբ բնկնում են № 0 և 1 (նկ. 5A) աղեղնավոր թակարդները, Վերջիններս պետք է դնել՝ հսկիչի վրա զրավչանյութ ամրացնելով, կամ առանց զրավչանյութի այն հաշվով, որ այդ փոքր կենդանիները թակարդն ընկնեն ծոռից ծառ ցատկելու ժամանակ: Վերջին դեպքում թակարդները ձողի վրա կապված սարքում են լայն ծառերի միջև, որոնց վրայով տեղի է ունենում այդ կենդանիների երթևեկությունը: Ձողը կամ ձողերը նրանց վրա կապված թակարդներով ամրացնում են հորիզոնական դիրքով, իսկ թակարդներից զեպի մյուս ծառը ձգվող ճյուղերը կտրտում են:

Շիկառնետի մորթը հանում են շերտ շերտ կամ դուրզակերպ: Ամբողջ մարմնի վրա հատումները կատարում են սկսած կզակից, վզի, կրծքի և փորի վրայով մինչև պոչի հիմքը, ապա առջևի և հետևի ոտքերի ներքին կողմերը, կրծքի և փորի վրայով, ինչպես և գետնասկյուռի մոտ (նկ. 14A): Մորթը մսեղյակից անջատում են մատների օգնությամբ, իսկ պոչի ողները դուրս են քաշում առանց հերձելու պոչի կաշին: Մորթը՝ թաթերի վրայից հանում են մինչև ճանկերը:

Շիկառնետի հանած մորթը խնամքով ճարպազրկում են բուրձ դանակով՝ քերելով պոչից զեպի գլուխը: ճարպազրկած մորթը, մորթափառը զեպի դուրս ուղղում են տախտակի վրա և բարակ մեխերով ամրացնում: Զորացրած մորթիները դարսում են զուգերով մուշտակը մուշտակին, քթանցքերի միջով տառատա կապում են բարակ թուղով և կախում՝ պոչերը զեպի ցած:

Շիկառնետների միսը Արևմտյան Եվրոպայի շատ տեղերում

քարձր է գնահատվում իր համի համար: Դեռևս շատ հին ժամանակներում շիկառնեաներին բուծում և բառում էին: Նրանց առանձնապես բարձր էին գնահատում հոտմացիները: Այդ նպատակով Հոտմում շիկառնեաների բուծարաններ էին սարքում, ցանկապատում էին կաղնու և հաճարի պուրակները, աշնանը այդ կենդանիների համար քնելու ընկել պատրաստում: Հետագայում շիկառնեաներին հատուկ շենքերում՝ գլիբարումներում՝ բառում էին կաղնիներով և շագանակներով: Հոտմացիները՝ ինչպես հարկն է շիկառնեաներին բռնելով, նրանց մորթում և որպես համեղ կերակուր մատուցում էին նրբաքիմք հարուստների սեղանին:

Շիկառնեանի միսը «իր սեփական յուղով սոխի և կարտոֆիլի հետ տապակած, դրում է Սպանդեներեղը, համի կողմից սրսի ամենալավ և շատ սննդարար կերակուրն է»:

6. ԼԵՌՆԱՅԻՆ ԿՈՒՅՐՄՈՒԿ


Mesospalax leucodon armeniacus Mähely.

Լեռնային կույրմուկը ստորերկրյա կրծող է՝ կույրմկների ընտանիքից: Ինչպես անունն է ցույց տալիս, այս կենդանիները կույր են: Նրանց աչքերը գնդասեղի գլխից մեծ չեն և ծածկված են մաշկի տակ: Կույրմկների մարմինը դանաձև է, թաթերը՝ կարճ և ուժեղ, պոչը՝ սաղմնային: Ականջակոները զարգացած չեն: Կտրիչները խոշոր են և առաջ ցցված: Ճանկերը համեմատաբար ուժեղ են, համարյա ուղիղ, մշտապես փորելուց բխացած: Մեր չափահաս լեռնային կույրմկների մարմնի երկարությունն է 17—19,5 սմ, հետևի թաթինը՝ 23—28 սմ: Կշիռը 166—222 գրամ է:

Լեռնային կույրմկան մեջքը և մասամբ մարմնի կողքերը բացդորշ են, ուժեղ հարդադույն փառով: Ճակատը մոխրագույն-գորշ-սպիտակավուն է, քթից մինչև ախանջի մասը մի շերտ է ձգվում՝ կաղմված երկարուկ, կոշտ և սպիտակավուն մազերից: Լեռնային կույրմկան մուշտակը մեջքի մեջտեղում 12 սմ բարձրությամբ ունի, շատ փափուկ է և հալասար: Այս կենդանիների մազափոխությունն առանձնապես հետաքրքրական կերպով է կատարվում օգոստոսի երկրորդ կիսին: Մասնակի մազաթափ

նկատվում է մինչև դեկտեմբերի կեսը (Համաժուռի շրջակայքում):

Կույրմկների ներկայութունը միանգամից աչքի է ընկնում: Այս կենդանիները ստորերկրյա անցքերի բարդ ցանց են կազմում և հողը գիտնի երես են հանում բավական մեծ փութը:



Նկ. 17. Կույրմուկ

Կույսերի ձևով: Կույրմկան բնի մակերեսային անցքերը ծառայում են կեր գտնելու համար: Ըստ Ա. Ռ. Պոլոսյանի տվյալների՝ սննդանցքերի տրամագիծն է 7×7 սմ, դուրս հանած հողի կույսերի բարձրությունը՝ 12—18 սմ: Սննդանցքերից դուրս թափած հողակույսերի միջին տարածությունն է 80—150 սմ: Կույրմկան սննդանցքերը միանում են ավելի խոր բնանցքներին, որոնց վերևում՝ գետնի երեսին հողակույտերն ավելի նոսր են դասավորված, բայց ավելի մեծ են (մոտավորապես 25 սմ բարձրությամբ): Սկզբում Սպիտակի շրջանում տեղ-տեղ յուրաքանչյուր հեկտարին 80-ից մինչև 200 ալյուրի հողակույս կա (խսկեռնային կույրմկների թիվը նույն մակարդակի վրա 7-ն է):

Կույրմկների բիոլոգիան վատ է ուսումնասիրված: Գրականությունից հայտնի է, որ զրանք սնվում են բույսերի ստորերկրյա մասերով (կոճղերով, արմատներով, պաշարներով և այլն): Կույրմկները ձմեռում համար սննդապաշար են հավաքում, օրինակ, Վինոգրադսկու և Օրոլենսկու տվյալներով Կույրմկան մի բնում ձմռան սննդապաշարի քանակությունը կարող է հասնել 14,2 կիլոգրամի: Ա. Ռ. Պոլոսյանի գիտողություններով


Սպիտակի շրջանում կույրմկները բանջարանոցների հոգերում ուռում են կարտոֆիլ, գազար և ձակնդեղ: Ձմռանը կույրմկները բնի ավելի խոր անցքերն են տեղափոխվում, որտեղ նրանք տարվա ամբողջ ցուրտ ժամանակը արթուն են մնում: Նաումովը և Լավրովը ենթադրում են, որ ամառվա ընթացքում կույրմկները մեկ կամ երկու անգամ են ցնկնում: Էզը բերում 1—3 ձագ: «Առաջին ցնկնումը տեղի է ունենում փետրվար-ապրիլ ամիսներին»: «Հուլիսին մոտավորը դառնում է ինքնուրույն, թողնում է ծնողական բուռը և սկսում է կառուցել իր սնփական անցքերը»:

Կույրմկները բնակութուն են հաստատում բաց տարածությունների վրա՝ խոպան հոգերում, արմերում և բանջարանոցներում: Կույրմկները Հայաստանում հանդիպում են Սպիտակի, Ստեփանավանի, Կիրովականի, Կալինինոյի, Ղուկասյանի, Ամասիայի և Թալինի շրջաններում:

Կույրմկների որսի եղանակները քիչ են մշակված: Մեզ մոտ Հայաստանում դրանց սովորաբար որսում են հետևյալ ձևով: Կույրմկան բնակելի բուն գտնելով՝ այն փորում են այնպես, որ բնի սննդանցքի վերին երեսը բացվի մի փոքր հորի կամ փոսի ձևով, մոտավորապես 30×30 սմ, ավելի լավ կլինի, եթե բնի անցք-բացվի քամու դեմ, այնպես որ քամին փչի բնի մեջ: Այնուհետև բացած անցքից ոչ շատ հեռու (30—40 սմ) որոշվում է այդ անցքի շարունակությունը և նրա վերևում լայնությամբ մի բաճ կամ սրածայր ձող են խրում հողում, բայց այն հաշվով, որ բնի կամարն այդ տեղում չխախտվի: Այս նախապատրաստումից հետո կույրմուկ որսողը մնում է հողը խրած իրի մոտ և հենց որ կույրմուկը սկսում է հող հրել դեպի բաց տարածությունը, բանով կամ սրածայր փայտով արագությամբ կտրում են կենդանու: Նախանջի ճանապարհը դեպի քնի խորքը: Կույրմկանը բնի մոտ պետք է հսկիլ անձայն, առանց ավելորդ շարժումների, և հենց որ նրա հրած հողը երևա, ուժեղ և կտրուկ շարժումով խրել բաճը կամ ձողը շատ խորը՝ լրիվ փակելով բնի անցքը: Կույրմուկը անջատած անցքից հանելը դժվար է, բայց այդ պետք է արագ անել, որպեսզի այդ կենդանին իր համար կողքի նոր անցք չփորի:

Ավելի պարզ է կույրմկան որսը աղեղիկով (նկ. 18), որը

պատրաստում են հետևյալ կերպ. շրջանակը (1) շինում են ձկուն փայտից, կտրացման տեղերում (14) փայտից կտորներ են կըտրում, ծայրերը սրում են, որպեսզի կարելի լինի շրջանակը հեշտությամբ հողի մեջ լրերը Շրջանակի բարձրությունը մոտավորապես 50—60 սմ է, զրա վրա կապում են (12) չոր ձկուն կեն շինած աղեղ (2): Աղեղի հետևի կողմը երկաթե փոքր ճար-



Նկ. 18. Կույրմուկը բանող աղեղը

մանդ են ամրացնում այն հաշվով, որ նետը հեշտությամբ անցնի կեռի անցքով: Նետը պատրաստում են ամուր և չոր փայտից, նրա այն ծայրին, որով սպանում են կենդանուն, սրած մեխ են ամրացնում, իսկ մյուս ծայրին անցք (4) են սարքում, որով անցնում է աղեղի լարը (3): Նետի վերջին վերին քառորդի վրա մի փոքր քյարթ են տնում, որի մեջ մտնում է շերտաձողիկը (6) նետը լարելու ժամանակ: Շերտաձողիկի երկարությունը կախված է նրանից, թե կույրմուկն որ տեղն են ուղղում, որ նետը հարվածի: Եթե ցանկանում են, որ նետը կպչի վզին կամ մարմնի առջևի մասին, ապա ձողիկը կարճ են վերցնում (12 սմ), իսկ եթե մեջքի մեջտեղը՝ ավելի երկար (15—18 սմ): Հսկիչը (10) պատրաստում են 5 սմ երկարությամբ և 1—2 սմ լայնությամբ փայտից, որի մի կողմում ուղղանկյուն կտրվածք են տնում՝ ձողիկի (9) չափին և ձևին համեմատ: Ձողիկը (9) սուր ծայրերով ցցում են բնի անցքի լայնությամբ: Հսկիչը և շերտաձողիկը կապված են փոկով (7): Կույրմուկն աղեղով որսալիս,

ինչպես և վերը նկարագրված եղանակի դեպքում, փոս են փորում և բնի անցքը բացում: Այնուհետև բացած անցքից մի քիչ հեռու նրան լայնակի ուղղութիւնով սարքում են ձողիկը (9), որի վրա քյարթով դեմ են ձգում հսկիչը (10): Հսկիչից փոկը ձգում են դեպի վեր (հսկիչը անցքին ուղղահայաց կանգնեցնելու նպատակով կարելի է դեպի վեր ձգվող փոկի համար դանակով հողից մի նեղ շերտ կտրել): Այնուհետև նայած շերտաձողիկի երկարութեանը (6), հողի մեջ խրում են շրջանակը, իսկ նրա տակը՝ կույրմկան բնանցքի վերևի նետի համար անցք են բացում: Շրջանակն այնպես են սարքում, որ լարած ժամանակ նետի ծայրը համարյա հասնի բնանցքի վերին մասին: Այնուհետև աղեղը ձգում են և շերտաձողը (6) դեմ գցում նետին՝ լարված վիճակում:


Կույրմկան համար լարած աղեղները պետք է ստուգել ոչ պակաս քան օրական մեկ անգամ:

Որսած կույրմկան մորթը հանում են շերտ շերտ կամ գորգակերպ (ինչպես գետնասկյուռինը կամ շեկառնետինը): Կույրմկան մորթը տախտակի վրա ուղղելիս այնպես պետք է ձգել, որ լայնութեան և երկարութեան հարաբերութիւնը լինի ինչպես 1: 5,5:

7. ԱՄԲԱՐԱՅԻՆ ԱՌՆԵՏ

Rattus norvegicus Berke.

Ամբարային կամ գորշ առնետի պոչը մարմնից կարճ է, հատի ոտները մատների արանքներում ունեն կաշվի ծալքեր՝



փոքր թաղանթների ձևով: Ականջն առաջ ձգելու և կողքին սեղմելու դեպքում աչքերին չի հասնում:

Շիզոլովսկու և Սոսնիխինայի տվյալներով Հայաստանում հանդիպող գորշ առնետի մարմնի երկարութիւնն է 15—24 սմ, պոչինը՝ 12—20 սմ, ափանջինը՝

նկ. 19. Մոխրագույն առնետ
1,4—2,2 սմ, հետևի թաթինը՝ 3,3—4,4 սմ: Մարմնի հիմնական գույնը վերևի կողմից թուխ շիկավուն է, փորի կողմից՝ բաց-

գորշ: Գորշ առնետների գունավորումը Հայաստանի պայմաններում խիստ փոփոխական է. օրինակ, ըստ վերոհիշյալ հեղինակների, Նրևան քաղաքում այդ տեսակին պատկանող հետազոտված կենդանիների ընդհանուր քանակի մոտ 10 տոկոսը ամբողջովին սև է:

8. ՍԵՎ ԱՌՆԵՏ

Rattus rattus L.

Սև առնետի պոչը սովորաբար մարմնից երկար է, հետևի ոտքերի մատների արանքում թաղանթ չկա, իսկ ականջը գլխի կողքի վրա ձգելիս հասնում և նույնիսկ ծածկում է աչքը:

Շիլլովսկու տվյալներով Հայաստանում հանդիպող սև առնետի մարմինն ունի 14—20 սմ երկարություն, պոչը՝ 16—21,5 սմ, ականջը՝ 1,9—2,5 սմ, հետևի թաթը՝ 3—3,5 սմ:

Մուշակի դույնը մարմնի վերևի կողմում սև է, փոքի կողմում՝ մուգ-գորշ կամ վերին կողմը գորշ-թուխ է, իսկ տակի կողմը՝ սպիտակ:

Առնետի հիշատակված երկու տեսակն էլ մարդու ուղեկիցներն են: Նրանք բնակություն են հաստատում գլխավորապես բնակիչի տներում, բակի շենքերում, արտաքնոցներում, պահեստներում, կայարաններում, լավերում և այլուր: Ամառը որոշ առնետներ երբեմն տեղափոխվում են այգիներ ու բանջարանոցներ, գետակների ափեր և ամայի տեղեր: Այստեղ, իրենց ձմեռային բնակատեղերից ոչ հեռու, առնետները բներ են սարքում և դրանց մեջ ապրում մինչև ցրտերն ընկնելը:

Առնետները ամենակեր կենդանիներ են: Բաղմանում են արագ: Գրականության տվյալներով սև առնետը տարեկան երկու անգամ է ցնկնում, իսկ գորշը ավելի հաճախ՝ 3-ից մինչև 5 անգամ: Գորշ առնետն ամեն անգամ բերում է 5-ից մինչև 12 (միջինը 8) ձագ: Էգերն արդեն երեք ամսականից կարող են ձագ բերել:

Առնետները Հայաստանում անհամաչափ են տարածված: Գորշ առնետներն իրենց առածամամբ, ըստ երևույթին, կապված են գոյություն ունեցող փոխադրական ճանապարհների հետ. նրանք հտնվիպում են երևանում և նրա շրջակայքում, լինինա-

կանում, Արտաշատում, Աշտարակում, ԼՂՄԻԺՆում և Վեդիում: Բնակավայրերի շրջակայքում այդ կենդանիները հանդիպում են ջրադաշններում և ջրանցքների երկարությամբ (այդ երևույթն առանձնապես հաճախ է նկատվում Վեդու շրջանի Ենգիջա գյուղում):


Սև առնետները նշված են Ալավերդու, Դելիջանի, Իջևանի, Շամշադինի և Նոյեմբերյանի շրջաններէ համար:

Առնետներին ամենուրեք ոչնչացնում են որպես զանազան հիվանդությունների տարածողների և պահեստների ու տնային տնտեսության փնտառողների: Դրանց որսալու եղանակները քաղմական են, բոլորին հայտնի և մենք այստեղ չենք թվարկի: Այնուամենայնիվ նշենք, որ առնետ որսալու ամենաարդյունավետ եղանակը՝ որսը երկաթալարի ծուղակներով և ճոճվող կամբըջակ ունեցող հարմարանքներով կատարելն է: Բերում ենք վերջին տեսակի ամենահեշտ պատրաստվող ծուղակների նկարները (նկ. նկ. 20 A և B): Սրանք կառուցված են հետևյալ սկզբունքով. կամբջակի (նկ. 20 B) ծայրը կամ արկղի կախարչի մի մասը այնպես են սարքում, որ առնետը եզրին հասնելով զլորվի և ասկզբից արկղի կամ ամանի մեջ, իսկ ճոճվող տախտակը նորից նախկին դիրքն ընդունի: Վերջին հարմարանքի շնորհիվ այդպիսի ծուղակներով կարելի է որոտ շատ առնետներ, որոնք հաջորդաբար և տարբեր ժամանակներում գալիս են դեպի դրված զրավհանյութը: Անհրաժեշտ է բազմազան գրավհանյութեր օգտագործել՝ հասարակ հաց, չորացրած հաց, միս, երշիկ, պանիր, պտուղներ և այլն, և փոխել ամեն անգամ, հենց որ առնետները զաղարում են ծուղակն ընկնել: Եթե այդ ծուղակներում մի քանի առնետ երկար ժամանակ միասին թողնենք, ապա հաճախ նրանք իրար կրծոտում և մորթերը փշացնում են: Դրա առաջն առնելու համար հանձնարարվում է ջուր լցնել ճոճվող կամբջակի տակ դրված ամանների (տակառ, դուլ) մեջ, եթե դրանք ջուր են պահում:

Առնետի մորթը հանում են շերտ շերտ կամ գորգակերպ, ինչպես դետոնասկյուռիներ կամ շիկառնետիներ: Առնետի մարմնի վրա երեք կտրվածք են անում՝ կզակից մինչև ցուլի հիմքը և առջևի ու հետևի ոտքերի ներքի կողմից (ինչպես ցույց է տրված

նկ. 27-ի վրա): Ոտքերից մորթը հանում են մինչև թաթերը՝
խակ պոչը միանգամայն կտրում են հիմքից:

Առնետի ճարպագրիած և մսի կտորներից մաքրած մորթն
ուղղում են տախտակի վրա՝ մորթափառը դեպի վեր և այնպես



Նկ. 20. Ինքնաշեն թակարդներ մոխրագույն առնետը բռնելու: Տնակ
ճոճվող ձողով: A. առաջին պատը հեռացված, B. աստիճան

են անում, որ երկարությունը լայնությունից երկու անգամ
ավելի լինի: Ըստ Նաումովի և Լավրովի առնետների մորթիները
«տալիս են էփան և լավ տեսակի մուշտակների հումք»:

9. ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱԿԱՆ ՀՄՄՍՏԵՐ

Mesocricetus auratus brandti Nehr.

Առաջավոր-ասիական համատերը աղջամուղջային և գիշե-
րային կրծող է: Այս համարձակ և հետաքրքիր կենդանին ունի

հաստ մարմին, կարճ թաթեր ու պոչ և լավ զարգացած հետաշրտյան պարկեր: Համատերներն անշնորհք («փանց») կենդանիներ են, գետնի վրա վազում են դանդաղ, բայց դրա փոխարեն փորում են հողը մեծ արագությամբ՝ կառուցելով նրա մեջ իրենց բները:

Շիջլավսկու տվյալներով, մեր համատերի մարմինն ունի 12,5—21 սմ երկարություն, պոչը՝ 2—4 սմ, ականջը՝ 1,6—2,5 սմ և հետի թաթը՝ 1,6—2,7 սմ:

Հայաստանում հանգիստը համատերի գույնը կնթաղա է մեծ տատանումների: Մեջքի ընդհանուր գույնը փոփոխվում է քաղցից, զորշավուն-ավազագույնից՝ մինչև համեմատաբար մուգ



Նկ. 21. Առաջավոր-ասիական համատեր


գորշ-թխավուն պարզ նկատելի թխասե քիստամազով: Մուշտակը գլխի, վզի և մարմնի կողքերին դեղնավուն երանգավորում ունի: Առաջավոր-ասիական համատերներից շատերը նույնպիսի, բայց ավելի թույլ արտահայտված երանգավորում ունեն՝ փորի մասի սպիտակավուն կամ գորշավուն գունավորման վրա: Կրծքի վրա մի սև բիծ կա, որն ընդգրկում է նաև կոկորդի և ուսի մի մասը: Վզի կողքերից շեղակի մի փոքր սև շերտ է գնում: Թաթերը և կզակը սպիտակավուն են:

Մուշտակը հարթ է, փափուկ և թափու: Հասուն մուշտակային ծածկույթ ազվամազը մեջքի միջին գծով 10—11,5 մմ է, իսկ քիստամազերը հասնում են մինչև 15,5 մմ երկարության:

Առաջավոր-ասիական համառների աղվամազի հիմքը մարմնի վերին կողմում մուգ կամ թերթաքարի նման գորշ է, իսկ փորկ-կողմում ավելի բաց՝ սպիտակավուն գույնից մինչև մուգ-գորշը:

Մեր համառների մադափոխությունը ուշ է սկսվում: Ըստ մեր մատերիալի՝ մի քանի կենդանիների մաշկի մզացումը գլխի շրջանում նշված է հուլիսի սկզբին, ուրիշներինը՝ միայն սեպտեմբերին: Առաջավոր-ասիական համառների մազափոխության նշաններ կրող մորթն աչքի է ընկնում ամբողջ մուշտակի փայլատ երանգավորմամբ և մաշվածությունով՝ ընդհուպ մինչև աղվամազի մուգ հիմքի նկատելի թափանցիկությունը:

Համառները բնակվում են բավական միատիպ կառուցվածքով՝ ընկնում (նկ. 22), բայց այդ կենդանիների հին բներն ավելի բարդ կառուցվածք ունեն, քան նոր փորածները: Ըստ



Նկ. 22. Առաջավոր-ասիական համառների բնի սխեման
(ըստ Արզիրոպուլոյի)

Արզիրոպուլոյի՝ մեր համառների բների կառուցման պրոցեսը կարելի է սխեմատիկ կերպով հետևյալ կերպ պատկերացնել. այդ կենդանիները սկզբում 50—100 սմ երկարությամբ մի թեք անցք են փորում, որի ծայրին կառուցում են նստարանը և պահեստը: Նստարանի խոռոչից սկսած՝ անցքը որոշ տարածություն շարունակվում է հորիզոնական կամ փոքր անկյամբ և ապա կտրուկ կերպով ջրհորի նման ղեպի վեր բարձրանում: Ուղղաձիգ, ջրհորանման փուլը փորելիս համառերը աստիճանաբար հողով լցնում է ավելի շուտ փորած հորիզոնական անցքը: Սովորաբար բնի անց-

քերի արժամագիծը 6—9 սմ է (հաղվադեպ մինչև 10,3 սմ)։ Ամբողջ բնի երկարությունը 1-ից մինչև 6 մետր է (Արդիրոպուլ), իսկ որոշ զեպքերում մինչև 10 մետրի (Ֆլյորով և Գուբեև)։ Առաջավոր-առիակա համաստերի բնի խորությունը հասնում է մինչև 2 մետրի (ամենախոր տեղը հաստություն է)։ Համաստերները բնակվում են խիստ բազմազան պայմաններում. նրանք իրենց համար տեղ են գտնում ստեպներում, մարգագետիններում և ցանքերի մեջ։ Դեպքեր կան նշված, երբ այս կենդանիների բնի են գտնվել երկաթուղային թմբերում և մարզկանց համար բնակարան ծառայող շենքերի մոտ։

Առաջավոր-առիակա համաստերի սիրած կերակուրն են հանդիսանում զանազան ցորենազդի բույսերի, մանափանգ ցորենի և դարու հատիկները և կանաչ մասերը։ Համաստերները այդ բույսերի առանձին հատիկներ և ամբողջ հասկերն ուտում են նրանց աճման տեղում՝ դաշտերում կամ փոխադրում են իրենց բնիների պահեստները։ Մեր համաստերները շատ մեծ զուս են հասնում ցանքերին, ուտել և զրանց որսի ծավալումն առանձնապես անհրաժեշտ է երկրագործական շրջաններում։ Այդ կրծողների անդրի տուրկաններից հիշենք նաև լորազդի բույսերը, որոնք բոլորն էլ ուտվում են համաստերների կողմից, վերջիններս հատկապես շատ սիրում են վալրի առվույտը, տափուրը և երեքնուկը։ Առատ կերի ծածանակ համաստերները հնարավորին չափ լցնում են իրենց յետաշայան պարկերը, որոնք փքվում են այդ կենդանիների մարմնի կիսի չափ, տանում են իրենց բունը և ամբարում պահեստում, կամ գտնելով հանգիստ ու ապահով տեղ՝ դուրս են հանում հետաշայան պարկերի պարունակությունը առջևի թաթերի յուրահատուկ շարժումների օգնությամբ և աստիճանաբար ուտում։ Որոշ զեպքերում համաստերները կենդանիներ (մանր թռչուններ, դաշտամկներ) էլ են ուտում։

Առաջավոր-առիակա համաստերների բազմացումը լրիվ չի ուսումնասիրված։ Հայտնի է, որ էգ համաստերը 8—12 ձագ է բերում, բայց նշված է, որ սաղմերի թիվը էգի արգանքում հասնում է մինչև 15 հատի։ Հայաստանի պայմաններում համաստերների զուգավորման շրջանն ըստ երևույթին սկսվում է մարտին և ապրիլի սկզբին։ Առաջին երիտասարդ համաստերները երկալն արձանագրված է մայիսի կիսին (Շիրվուսկի)։ Համաստերի

ձագերի վրա մազային ծածկույթը երևում է ծնվելուց 6 օր անց, իսկ 14-րդ օրը բացվում են նրանց աչքերը: Հինց որ աչքերը բացվում են, փոքր համատերներն արգեն փորձում են ընկի գուրս սողալ և, բացի մոր կաթից, սնվել նաև ալյ կերով: Հունիսի առաջին կիսին նկատվում է երիտասարդ համատերների ցրվելը մայրական ընկի: Ըստ երևույթին մեր համատերները ցնկնում են նաև երկրորդ անգամ՝ օգոստոսին: Բազմաշրջան ժամանակ երիտասարդ համատերների համար մեծ վտանգ է ներկայացնում նրանց ծնողներին հակումը՝ ուտել սեփական ձագերին: Նկատված է, որ ձագերին ուտում են ոչ միայն չսփառառ արունները, այլև այդ կենդանիների մայր-էգերը:

Այնպես Առաջավոր-ասիական համատերները քուն են մըտնում: Նրանց մասսայաբար քուն մտնելը կախված է ջերմաստիճանից և տարեցտարի նույն ժամկետին չի տեղի ունենում: Պրինակ, հաճախ Շիրդովսկու, Սպիտակի շրջանում 1936 թվին համատերների մասսայական քուն մտնելը սկսվել է նոյեմբերի սկզբին, իսկ 1937 թվին նույն տեղում՝ սեպտեմբերի վերջին: Մեր համատերների՝ ձմեռային քնից արթնանալու դարձան ժամկետի մասին դիտողություններ չկան:

Առաջավոր-ասիական համատերի կյանքի տևողությունը փակված պայմաններում հավասար է մոտ երկու և կես տարու (Արգիրոպուլո):

Համատերները Հայաստանում տարածված են խիստ կլիմա-առնեցող, անտառազուրկ լեռնային շրջաններում: Անտառային շրջաններում, շատ խոնավ տեղերում, չոր ստեպներում և կիսա-անապատում այդ կենդանիները չեն ապրում: Ուղղաձիգ դժով այդ համատերները մեղ մոտ արձանագրված են սկսած 1500-ից մինչև 2300 մետր բարձրության վրա ծովի մակերևույթից: Ամենից շատ նրանք հանդիպում են 1600—1900 մետր բարձրության վրա (Արգիրոպուլո): Առաջավոր-ասիական համատերի տարածման և դյուղատնտեսական մշակույթներին հասցրած նրանց ամենամեծ վնասի գոտին տարածվում է Ամասիայի և Ղուկասյանի շրջաններից Արագածի և Աղմաղանի լեռնաշղթաների լանջերով զեպի հարավ-արևելք՝ մինչև Ադիգերեկովի շրջանը: Բացի դրանից, այդ համատերները մեղ մոտ հանդիպում են ավելի հյուսիսում, ընդհուպ մինչև Կալինինոյի և Ալավերդու շրջաննե-

ըը, Սեանա լճի ավազանում, մինչև Սիսիանի շրջանը և Տիպի հարավ՝ մինչև Թալինի և տեղ-տեղ էլ Վեդու շրջանը (Սարայ-Բուլաղի լեռնաշղթան)։

Համատերներին կարելի է որսալ մի քանի եղանակով։ Եթե մոտակայքում ջուր կա, ապա համատերներին հեշտությամբ կարելի է բնից դուրս քշել՝ 2—3 դույլ ջուր լցնելով։ Բնից դուրս գալու պահին համատերներին կարելի է ձեռքով բռնել կամ փայտով գլխին խփելով սպանել։ Համատերները լավ են որսվում օդակով (նկ. 13A) և փոքր համարների աղեղնային թակարդներով (նկ. 5A)։ Օղակները և թակարդները պետք է դնել երեկոյան, իսկ ստուգել՝ առավոտյան շատ վաղ։

Օղակները սարքում են բնի մուտքի անցքերում։ Խոտավետ անդերում թակարդները դնում են համատերների կածանների վրա։ Այդ կենդանիներին որսալու համար որսորդն ինքը կարող է կածան բացել։ Այդ նպատակի համար խոտի մեջ համատերի բնից սկսած նեղ զծով խոտը արդիւում են և նրա վրա սարքում թակարդներն առանց գրավչանյութի։ Համատերներին որսալու համար գրավչանյութով թակարդ օգտագործելու դեպքում նրանց դատավորում են բնի մոտերքը, իսկ սրպես թակարդի գրավչանյութ՝ ափսեակի վրա հաց կամ հում միս դնում։ Եթե համատերի բունը գտնվում է բուսականությունից դուրս անդում, ապա թակարդները դնում են առանց գրավչանյութի, անմիջապես մուտքի անցքի մոտ և փոքր ինչ քողարկում։

Բռնած համատերի մորթին հանում են գորգակերպ, ինչպես արդեն նկարագրված է մի շարք այլ կենդանիների համար (խլուրդ, շիկառնետ, գեանասկյուռ և առնետներ)։ Մորթն ուղղում են տախտակի վրա, մորթափառը դեպի վեր։ Համատերի ճիշտ հանած և ուղղած մորթու երկարության և լայնության հարաբերությունը պետք է լինի ինչպես 1 : 1,5։

10. ԶՐԱՌՆԵՏ

Arvicola amphibius persicus Fil.

Զրառնետը կիսաջրային կյանք վարող մեծ դաշտամուկ է։ Այս կրծողը մյուս դաշտամկներից տարբերվում է իր կազմուքյամբ և մեծությամբ, Հայաստանում հանդիպող չափահաս

Զրառնեաի մարմինն ունի 13—20 սմ երկարություն, պոչը՝ 8,4—13,4 սմ, հետևի թաթը՝ 2,9—3,4 սմ, տկանջը՝ 1,4—2,2 սմ: Զրառնեաի առջևի և հետևի ոտքերի մատները թաղանթից զուրկ են, բայց զինված են բավականին ուժեղ ու կեռ ճանկերով: Զրառնեաը ջրում շատ լավ լողում և սուզվում է:

Մարմնի վերին մասի գույնը մուգ է, գորշավուն-դարչնագույն, մեջքի երկարությամբ խառը սև թուխ երանդավորմամբ: Մարմնի կողքերին գերակշռում է գորշ-դարչնագույնը. տակի կողմը՝ կոկորդից սկսած մինչև պոչի հիմքը մսխրագույն է: Որոշ



Նկ. 23. Զրառնեա

կենդանիների փորի միջին մասով շրկավուն նեղ շերտ է գնում, այլ կենդանիների շրկավուն քիստամազերն ալիկի համաչափ ծածկում են տակի կողմը և մասամբ անցնում կողքերի վրա: Պոչը մուգ-գորշ է: Զափահաս կենդանիների մուշտակը ձմռանն ալիկի մուգ է, քան ամառը:

Զրառնետների մազափոխությունը տեղի է ունենում ամբողջ ամառվա ընթացքում: Այս կենդանիների մորթափառը մազափոխության ժամանակ մարմարե նախշ ունի, այն ամբողջովին ծածկված է սև-կապտավուն զիգզաղ շերտերով ու բծերով: Մազափոխությունն սկսում է կենդանու ամբողջ վերին մասից, ներառյալ նաև գլուխը: Այնուհետև մորթափառի սև-գորշավուն

գույնը, հետեապես և մազափոխութիւնը, տարածվում է մարմնի կողքերի, պոչամասի (մեջքի հետևի մասի) և փորի վրա: Ամենից վերջը իրենց մազը փոխում են աճուկների մասերը, մարմնի և վզի կողքերը և փոքր մասեր ախանջների մոտ:

Հուլիսի սկզբին մեզ հանդիպած հզի կամ արդեն ցնկնած առնետների մորթափառը միանգամայն մաքուր էր. նրանց մազափոխութիւնը կանգ էր առել: Արուների մորթափառի վրա բացի ախներէ մազափոխութիւնից ամբողջ ամառվա ընթացքում մեծ արատներ են առաջանում նաև կծած տեղերում, որոնք առաջանում են իրար հետ կովիւրց հետո: Հայաստանում ջրառնետի մուշտակն ամենաթալ որակի է լինում ուշ աշնանը, ձմռանը և գարնանը:

Ջրառնետները բնակութիւն են հաստատում սովորաբար գետակների, ճահճների, բճերի և այլ ջրային տարածութիւնների մոտ: Մեղմում այդ էկնդանիներն առանձնապես սիրում են իրենց բնիքը կառուցել գետակների և ոռոգման ջրանցքների ափերին՝ հողակուլտելի արանքում կամ կավային լանջերի ճեղքերում: Նրանք հանդիպում են նաև քարքարոտ ափերի, ջրին մոտ ժայռերի մեջ և առափնյա խոտուտներում: Ջրառնետների ներկայութիւնը ջրերի մոտ համարյա միշտ էլ լավ հայտնի է գտնում շնորհիվ այն կաճանների, որ այդ էկնդանիներն անց են կացնում ջրից դեպի կերատեղերը և բնիքը: Այդ կաճանների մոտ կամ ուղղակի նրանց վրա հաճախ հանդիպում են ջրառնետների կղկղանքներ և որպէս կեր հավաքած տերեւների և ցողունների կույտեր:

Ջրառնետները սնվում են խոնավասեր խոտաբույսերի վերերկրյա մասերով: Գրականութան տվյալներով այս էկնդանիները ուտում են նաև պալարներ ու արմատներ, կարող են վնասել գաշտային, հացահատիկային մշակութիւններին, բանջարանոցներին և այգիներին: Ջրառնետները որոշ զեպքերում ուտում են միջատներ, սատկած ձկներ, փափկամորթներ և այլ մանր էկնդանիներ: Ձմռանը առատ ձյունի ծածկոցի դեպքում, ջրառնետները ձյան տակ անցքերի բարդ ցանց են փորում և այդ անցքերով հասնում են բույսերի արմատամբձ մասերին կամ իրենց աշնանային պաշարներին, որոնցով և սնվում են տարվա այդ եղանակին: Նաուժովը և կավքովը զբւոյս են: Ջրերի մոտ ապ-

բող կենդանիները մտնում են ավի երկարութեամբ դոյացած սատույցի տակ, որտեղ նրանք սնվում են առափնյա բույսերով և սատկած ձկներով»:

Ջրառնետներն ամառվա ընթացքում մի քանի սերունդ են տալիս: Գրականութեան տվյալներով էդ առնետը յուրաքանչյուր անգամ 3-ից մինչև 12 ձագ է բերում. մենք հղի առնետներ ենք արձանագրել, որոնց արգանդում 6—7 սաղմ է եղել: Ջրառնետների հղիությունը մոտավորապես երեք շաբաթ է տևում: Այս կենդանիների ձագերը կույր և մերկ են ծնվում, բայց զարգանում են շատ արագ: Երիտասարդ Ջրառնետները արգեն մեկ ամսական հասակում սկսում են ջրվել և ինքնուրույն կյանք վարել: Որոշ դեպքերում այս տեսակին պատկանող երիտասարդ կենդանիները հենց առաջին տարին սկսական հասունութեան են հասնում և սկսում են բազմանալ: Ջրառնետների բազմացման շրջանը ձգձգվում է մինչև ձմռան սկիզբը. օրինակ Միդուլինը Ուկրաինայի համար նշում է, որ մինչև գեկտեմբերի սկզբի օրերը (1929 թ.) Ջրառնետների կույր ձագեր են գտնվել:

Ըստ Վինոգրադովի և Օբոլենսկու՝ հյուսիսում Ջրառնետները հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ձմռան քուն են մտնում. թիբենց տարածման ավելի հարավային շրջաններում, օրինակ՝ Հյուսիսային Կովկասում, Ջրառնետները բոլորովին քուն չեն մտնում: Հայաստանի պայմանների համար Ջրառնետների ձմռան քնի մասին տվյալներ չկան:

Ջրառնետները հիվանդանում են «տուլարեմիայով». այդ հիվանդութեամբ կարող է վարակվել նաև մարդը, ինչպես նաև զանազան վայրի և ընտանի կենդանիներ: Տուլարեմիան և այլ հիվանդություններ կարող են Ջրառնետների մեջ մասսայական մահացություն առաջացնել: Նայած համաճարակներին և Ջրառնետների բազմացման թափին մեզ մոտ ՍՍՌ Միության մեջ տարեկան մթերում են 7-ից մինչև 19 միլիոն Ջրառնետի մորթ:

Հայաստանում Ջրառնետները տարածված են ամենուրեք, որտեղ նրանց համար համապատասխան բնակատեղի կա: Դրանք շատ են հանդիպում Սեանա լճի ավազանում (Գրլի), գետերի և նրանց վտակների հովիտներում՝ Ջանգուի և Միսխանայի, Արաքսի, Արփաչայ գետի, Փամբակ գետի, Ալստեֆի և այլն: Հայաստանում ամենից բարձր այդ կենդանիները նշվել են Փամբակի

շենաշղթայի վրա, որտեղ նրանք բնակվում են առուների ափերին, մինչև 2310 մետր բարձրության գոտում (Էշակ-մեյդան):

Զրառնետներին որսում են փոքր համարները աղեղնավոր թակարդներով, որոնք դրվում են նրանց կածանների ու կերատեղերի վրա:

Զրառնետի մորթը հանում են շերտ-շերտ կամ գորգակերպ, ինչպես և ամբարային առնետինը: Մորթը օտքերից հանում են մինչև թաթերը, իսկ պոչը հիմքից կտրում են: Զրառնետի ճարպապրկած ու մսի կտորներից մաքրած մորթն ուղղում են տախտակի վրա, մորթափառը դնալի վեր. լայնության և երկարության հարաբերությունը պետք է լինի ինչպես 1:2:

ԱՎԱԶԱՄՈՒԿ

Հայաստանում հանդիպում են ավազամկների երեք տեսակ, որոնք այստեղ համարյա ամենուրեք միասին են տարածված:



Նկ. 24. Ավազամուկ

Վրժիկավուն կամ գորշավուն: Ավազամկների երկար պոչը ծածկված է թավով և վերջանում է փնջով:

Ավազամկների արտաքին տեսքը յուրահատուկ է: Այս կենդանիների հետևի օտքերի թաթերը երկարած են, առջևի թաթերը՝ կարճ: Ականջակոնքերը խոշոր են՝ ծածկված նոսր և կարճ թավով: Աչքերը մեծ են, բեխերը՝ երկար: Փորի կողմը սպիտակ է, վերևի կող-

11. ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՎԱԶԱՄՈՒԿ

Meriones persicus Blani.

Աչքի է ընկնում մարմնի, գլխի և պոչի հիմնական մասի վերի կողմի վառ շիկավուն գույնով, պոչի ծայրը և փունջը գորշավուն են: Մարմնի ամբողջ տակի կողմը, թաթերը և պոչի տա-

կը համարյա ամբողջովին սպիտակ են, աղվամաղի հիմքը՝ սպիտակ, Հետևի թաթերը տակից լերկ են: Մարմինն ունի 14,6—18,5 սմ երկարություն (միջինը՝ 15,9), պոչը՝ 13,0—20,5 սմ (միջինը՝ 17,2), հետևի թաթը՝ 3,4—4,2 սմ (միջինը՝ 3,8):

12. ՓՈԳՐԱՍԻԱԿԱՆ ԱՎԱԶԱՄՈՒԿ

Meriones tristrami Thom.

Մարմնի և գլխի վերևի կողմն անփայլ է՝ ավազադուրչ երանգավորման նկատելի գերակշռություն: Գլխի և վզի տակը սպիտակ է, աղվամաղի հիմքը՝ սպիտակ: Կուրծքը և փորի մասը սպիտակ են, մաղի հիմքը՝ բաց-դուրչ: Պոչի հիմքը վերևից և տակից շիկավուն է, դեպի ծայրը աստիճանաբար սև մաղեր են: ավելանում, վերջին երբորդը և պոչի փունջը սև են: Հետևի թաթերի ստորին երեսը մասամբ ծածկված է կարճ ու կոշտ մազերով:

Մարմինն ունի 12,7—17,5 սմ երկարություն (միջինը՝ 15,3), պոչը 12,0—16,3 սմ (միջինը՝ 14,5), հետևի թաթը՝ 3,0—3,8 սմ (միջինը՝ 3,3):

13. ՎԻՆՈԳՐԱԴՈՎԻ ԱՎԱԶԱՄՈՒԿ

Meriones vinogradovi Heptn.

Նույն գունավորությամբ ինչ որ նախորդ տեսակը: Բայց միջքի կողմը փոքր ինչ մոխրագույն և փորի կողմի սպիտակ մորթը մոխրագույն հիմքով:

Մարմնի երկարությունը 14,0—17,5 սմ (միջինը 15,8), պոչի երկարությունը 12,6—16,3 սմ (միջինը՝ 14,3), հետևի թաթի երկարությունը 3,3—7 սմ (միջինը՝ 3,5):

Մեր ավազամկնեղն ապրում են բներում՝ չոր ստեպային և կիսաանապատային տեղերում: Այս կենդանիներն իրենց բները փորում են զանազան տիպի հողերում, բայց գերադասում են կավային, ավազային, խճային կամ կոպճային հողերը: Ավազամկնեղն շատ հաճախ իրենց բները սարքում են բնական և արհեստական թեքությունների ստորոտների մոտ, փոսերում, խրամատներում, հին գերեզմանների ու սլատերի մոտ: Ավազամկան բնի մուտքը

անցքը սովորաբար լայն է, հաճախ այն մի ողողատ է, որի ճյուղավորություններում էլ այդ կենդանիները բնակվում են:

Ավազամկների համար սնունդ են հանդիսանում զանազան բույսեր, նրանց սերմերը, ցողուններն ու տերևները: Որտեղ հացահատիկների ցանքեր կան ավազամկները էական ֆլուս են հասցնում նրանց՝ ուտելով և իրենց բները տանելով զանազան հացաբույսերի (ցորենի, գարու և այլն) հատիկներ:

Տարվա տաք եղանակին ավազամկները գիշերային կյանք են վարում, աշնանը և գարնանը նրանց կարելի է նկատել նաև աղջամուղջին: Ձմեռն այդ կենդանիները թաքնվում են իրենց բներում և տարվա ամենացուրտ ժամանակ բուրդովին չեն երևում գետնի երեսին: Մինչև այժմ էլ ուսումնասիրված չէ, թե ինչ վիճակում են գտնվում գրանք ձմեռն իրենց բներում (քնած, թե՞ արթուն):

Ըստ եղած դիտողությունների ավազամկները բազմաճյուղ են ըստ երևույթին տարեկան երկու անգամ—գարնանը և աշնանը:

Մեզ մոտ ավազամկների տարածումն ընդգրկում է Հայկական ՍՍՌ-ի հարավային շրջանները:

Meriones persicus-ը հանդես է գալիս Արտաշատի, Վեդու, Ղարաբաղլարի, Միկոյանի, Աղիգրեկովի, Կոտայքի, Մեղրու և Իջևանի շրջաններում:

Meriones vinogradovi-ին—Վեդու, Ղարաբաղլարի, Միկոյանի և Աղիգրեկովի շրջաններում:


Meriones tristrami-ին գտնված է Երևան քաղաքի շրջակայքում, Հոկտեմբերյանի և Բերիայի շրջաններում:

Ավազամկների սխտեմատիկայի, բիոլոգիայի և տարածման մասին անդեղությունները վերցրած են Ա. Ռ. Պողոսյանից:

Ավազամկներին կարելի է բռնել փոքր համարների աղեղնային թակարդներով (նկ. 5A) և զանազան կենդանաորսներով: Առաջինները դնում են բների մուտքի անցքերի մոտ առանց գրավչանյութի, իսկ երկրորդները՝ գրավչանյութով, որի համար օգտագործում են հաց:

Ավազամկան մորթը հանում են կամ շերտ-շերտ կամ գորգակերպ (ինչպես գետնասկյուռիներ, առնետիներ): Ուղեքերից մոր-

Թը պէտք է հանել մինչև թաթերը, իսկ պոչը կտրել հիմքից։
Ճարպագրկումից և մսի կտորներից մաքրելուց հետո մորթն
ուղղում են տախտակի վրա, մաշկափառը գետի վեր։ Մորթու
լախուլթյունը և իրկարուլթյունը պետք է միմյանց հարաբերեն
այնպես, ինչպես 1: 2:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

52

Նախաբան	3
Սնդրկովկասյան խլուրդ	7
Աքիս	14
Պարսկական սկյուռ	22
Փոքրասիական զետնասկյուռ	26
Շիկառնետ	34
Լեռնային կույրմուկ	41
Ամբարային առնետ	45
Առ առնետ	46
Առաջափոր-ասիական համստեր	48
Զրառնետ	53
Ավազամուկ	57
Պարսկական ավազամուկ	57
Փոքրասիական ավազամուկ	58
Վինոգրադովի ավազամուկ	58

POULTRY HUSBANDRY

11



1. The first thing to consider when you are starting a poultry business is the location. You need a place that is quiet and has good ventilation. You also need a place that is easy to clean and has a good water supply.

2. The next thing to consider is the type of birds you want to raise. There are many different breeds of chickens, ducks, and geese. You should choose a breed that is suitable for your climate and your intended use.

3. Once you have decided on the location and the type of birds, you need to build the poultry house. The house should be large enough to accommodate the birds and have a good ventilation system. You also need to have a good water supply and a good waste disposal system.

4. The next step is to buy the birds. You should buy birds from a reputable breeder and make sure they are healthy and free from disease. You should also make sure you have the necessary equipment for raising the birds, such as feeders, waterers, and nesting boxes.

5. The final step is to start raising the birds. You should keep the birds in a clean and healthy environment and provide them with a good diet. You should also make sure you have a good record-keeping system to track the growth and health of the birds.

Յերմեկական խմբագիր՝ Մ. ԿՈՓԼԱՆՅԱՆ
Թրագրիչ՝ Ա. ԱՐՁԱՓԱՆՅԱՆ

Հանձնված է արտագրության Թ/VIII 1947 թ., ստացադրված է տպագրու-
թյան 8/X 1947 թ., ՎՖ 03222, պատվեր 021, հրատ. 451, տիրած 1000.

4 տպագրական մամուլ, 1 ժամույսում 38400 տպ. նիշ.

Հայկական ՍՍՌ Գիտ. Ակադեմիայի տպարան, Երևան, Արտվյան 101.

ԳԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՒՆ. ԳՐԱԴ.



FL0007952

ԳԻՆԸ 4 Ռ.

A $\frac{16}{19378}$